



# ՄԱՍՆԱԿԳՈՒՅԻՆ ՂԴՂՐՈՑ

Մասնակցային մշակույթ և  
կոմպետենցիաների վրա հիմնված  
ՈԼՍՈՒԳՈՒՄ

Կրթական ռեսուրսներ

# ՅԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿԱԶՄ

Միշա Թաղևոսյան  
Սերոբ Խաչատրյան  
Վահրամ Սողոմոնյան  
Գրիգորի Յովհաննիսյան  
Նարեկ Մեյրոյան  
Մարգարիտա Մաթևոսյան  
Բուրքեհարդ Շմիտ  
Դորեն Սողեյլ

Ռեսուրս գրքույկի մշակման աշխատանքների  
համակարգող՝ Միշա Թաղևոսյան

Խմբագիր՝ Արևիկ Յարությունյան  
Ձևավորող՝ Նորա Գալֆայան

 [krtakan2017@gmail.com](mailto:krtakan2017@gmail.com)

 [@krtakan2017](https://www.facebook.com/krtakan2017)

 Կրթական բաղաբացիական նախաձեռնություն



# ՄԱՍՆԱԿԳՅԱՅԻՆ ՂՊՐՈՑ

Մասնակցային մշակույթ և  
կոմպետենցիաների վրա հիմնված  
ՈԼՍՈՒԳՈՒՄ

**Կրթական ռեսուրսներ**



Սույն ձեռնարկը պարունակում է տեսական և գործնական նյութեր ու փաստաթղթեր, որոնք մշակվել են «Բազմակարծիք կրթական համակարգի ձևավորում» ծրագրի շրջանակում՝ Երևան և Վանաձոր քաղաքներում կայացած աշխատանքային հանդիպումների արդյունքում: Ծրագրի նպատակն է խթանել մասնակցային մշակույթը՝ որպես ժողովրդավարական ազատ և համերաշխ հասարակության գլխավոր հենասյուն, և դրա համար անհրաժեշտ կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված ուսուցումը հանրակրթական դպրոցներում:

Ժամանակակից և ժողովրդավար յուրաքանչյուր հասարակություն անհնար է պատկերացնել առանց անհատների, ովքեր զինված են քննադատական մտածողության կոմպետենցիայով, փնտրում և գտնում են լուծումներ գիտական, տեխնիկական և սոցիալական խնդիրներին, ինչպես նաև ակտիվ մասնակցում են հանրային տարբեր քննարկումներին և պատրաստ են կառուցողական փոխզիջման:

Ցանկացած կրթական համակարգ պետք է համախմբի կրթական գործընթացի բոլոր մասնակիցների (ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ) ներուժը և ստեղծի նրանց միջև արդյունավետ համագործակցություն ինչպես դպրոցի, համայնքի, այնպես էլ՝ ազգային մակարդակում:

Մենք պետք է հաշվի առնենք, որ մասնակցությունը չի ավարտվում դասարանի շեմին: Մասնակցային մշակույթը սկսվում է ամենօրյա դասերով և իր մեջ պարփակում մեր աշակերտների այն բոլոր հմտությունները, որոնք անհարժեշտ են ընդունելու և հաղթահարելու ժամանակակից գլոբալ և տեղական մարտահրավերները:

**Սույն ուղեցույցը կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցմանն առնչվող նյութերի հավաքածու է:**

Այն կարող է նպաստել ժամանակակից ուսուցման մեթոդների կիրառմանը, ինչպես նաև կարող է լինել առաջին քայլն ինքնավրստահության ու կոմպետենտության անսահման ձգտումներով լի այն երկար ճանապարհի, որը երիտասարդներն անցնում են ժողովրդավարության, համերաշխության և բոլորի բարեկեցության վրա հիմնված հասարակության մեջ:

**Աշխատանքային խումբ**



## | ՄԱՍՆԱԿԻՑ ԴՊՐՈՑՆԵՐ



ՉԻՐԱԿ

**Կառնուտի**  
միջնակարգ դպրոց

**Վանաձորի**  
**N20** հիմնական դպրոց

**N5** ավագ դպրոց

**N4** հիմնական դպրոց

**N8** հիմնական դպրոց

**N27** հիմնական դպրոց

**Ստեփանավանի**  
ավագ դպրոց

**Դեբեդի**  
միջնակարգ դպրոց

**Ձորագյուղի**  
հիմնական դպրոց

**Արևածագի**  
միջնակարգ դպրոց



ԼՈՐԻ

**Ներքին Կարմիրաղբյուրի**  
միջնակարգ դպրոց



ՏԱՎՈՒՇ

**Արագածավանի**  
միջնակարգ դպրոց



ԱՐԱԳԱՇՈՒՆ

**Արամուսի**  
միջնակարգ դպրոց



ԿՐՏԱՅԵ

**Նորավանի**  
միջնակարգ դպրոց



ՆՈՐԱՎԱՆԻ

**Ամբերդի**  
միջնակարգ դպրոց

**Երևանի**  
**N198** ավագ դպրոց

**N82** հիմնական դպրոց

**N33** հիմնական դպրոց

**N180** հիմնական դպրոց



ԵՐԵՎԱՆ

**Վեդու**  
**N2** հիմնական դպրոց



ՎՈՅՈՒՏՈՒՏԿ

## | ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Ծրագիրն իրականացվել է երկու փուլով.

- 1 | 2019թ., սեպտեմբերի 23-25, Երևան  
2019թ., սեպտեմբերի 26-28, Վանաձոր
- 2 | 2019թ., նոյեմբերի 18-20, Երևան  
2019թ., նոյեմբերի 21-23, Վանաձոր

Ընդհանուր առմամբ՝ աշխատաժողովները բաղկացած են եղել 3 մասից.

- 1 | **Մասնակցային կառավարում** (ինչպես են կայացվում դպրոցների մանկավարժական և կառավարման խորհուրդների որոշումները, խորհուրդների միջև համագործակցություն)
- 2 | **Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված** (այսուհետ՝ ԿՁՈԻ) դասի պլանավորման և գնահատման մեթոդաբանություն (ԿՁՈԻ տարրեր, օպերատորներ և մեթոդներ)
- 3 | **Իրական դասի անցկացում դպրոցում** ուսուցիչների կողմից իրենց անձանոթ աշակերտների համար՝ ըստ ԿՁՈԻ դասի պլանավորման գործիքների, և **ուսուցիչների դասի գնահատում** (տնօրենների կողմից՝ ըստ մշակված ԿՁՈԻ դասի գնահատման ձևաւմուշների):

Ծրագրի ավարտին մասնակից տնօրենները և ուսուցիչները ստեղծել են «Բազմակարծիք կրթական համակարգի ձևավորում» աշխատանքային խումբ:

Ծրագրի ավարտին Վանաձորի թիվ 20 հիմնական դպրոցին և Երևանի թիվ 198 ավագ դպրոցին շնորհվել է «Մասնակցային դպրոցի» «փորձաշրջանի» կարգավիճակ, որի չափանիշները ենթակա են հստակեցման՝ ՀՀ ԿԳՄՍՆ և փորձագիտական խմբի մասնակցությամբ:

«Մասնակցային դպրոց» ծրագրի ֆեյսբուքյան էջը՝  
<https://www.facebook.com/masnakcayin.dproc/>





# ԲՈՎԱՆՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



**8** | Մասնակցային  
մշակույթ

**34** | Կոմպետենցիաների վրա  
հիմնված ուսուցում

**86** | Փորձնական  
դասեր

**92** | Ինչպես դառնալ  
«Մասնակցային դպրոց»

ՄԱՍՆԱԿԳԱՅԻՆ

ՄՇԱԿՈՒՅԹ

*Ժողովրդավարության հիմքը մասնակցային մշակույթն է, սակայն դրա ձևավորումն անհնար է առանց անհրաժեշտ կոմպետենցիաների, որոնք փոխկապակցված են համապատասխան հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հետ:*



- Թեզեր մասնակցության օգտակարության մասին
- Առաջնորդության հմտություններ տնօրենների և ուսուցիչների համար
- Որոշումների ընդունում և արժևորման մշակույթ
- «Կարճ խոսքի» սկզբունքներ՝ 5 կետերի մեթոդը
- Կոնֆլիկտային իրավիճակներում գործելու ռազմավարություններ

၂၄၈၆၅၃၂၀၉၈၇၆၅၄၃၂၁၀  
၉၈၇၆၅၄၃၂၁၀၉၈၇၆၅၄၃၂၁၀  
၆၅၄၃၂၁၀၉၈၇၆၅၄၃၂၁၀၉၈၇၆၅၄၃၂၁၀  
၃၂၁၀၉၈၇၆၅၄၃၂၁၀၉၈၇၆၅၄၃၂၁၀၉၈၇၆၅၄၃၂၁၀

## 1

## ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

- 1.1** Մարդն ունի ազատ կամք: Անկախ իր սոցիալական կապերից և սոցիալական պայմաններից՝ մարդը կարող է ազատորեն որոշումներ կայացնել:
- 1.2** Եթե տվյալ հասարակարգի ելման կետը ազատությունն է, ապա մարդու մոտ այդ ազատությունն ինքնաբերաբար ի հայտ է բերում սեփական արարքների համար պատասխանատվություն:
- 1.3** Եթե հասարակությունն ամեն ինչ պայմանավորում է մարդու սոցիալական կամ կենսաբանական հատկանիշներով, ապա նվազում է մարդու սեփական արարքների համար ունեցած պատասխանատվության արժևորումը:

## 2

## ՄԱՐԴՆ ԱՆՅԱՏԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԷԱԿ Է

- 2.1** Մարդու մարդ լինելն արտահայտվում է ինչպես վերջինիս անհատականությամբ, այնպես էլ նրա սոցիալականությամբ: Ինքնաիրացման համար մարդն ապավինում է իր դիմացինին: Դա արտահայտվում է թե՛ կենսաբանորեն, թե՛ տնտեսապես և թե՛ հոգեբանորեն: Մարդը չի կարող ինքն իրենով միայնակ հասունանալ և չի կարող ինքն իր համար միայնակ ապրել:
- 2.2** Սոցիալականությունն ու անհատականությունը միահյուսվում են բազմակարծության գաղափարի մեջ, որն արտացոլվում է միմյանց ապավինող անհատների բազմության մեջ: Յետևաբար, հասարակությունները ձգտում են հաստատել այնպիսի հասարակարգեր, որոնցում ներդաշնակորեն երաշխավորված են և՛ սոցիալականությունը, և՛ անհատականությունը: Նման հասարակարգերը համարվում են բազմակարծիք հասարակարգեր:



## 3

## ԲԱԶՄԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ Է

- 3.1** Այն տնտեսապես ավելի ազդեցիկ է, քանի որ մի կողմից մարդու նախաձեռնողականությունն ու նոր բան ստեղծելու կոմպետենցիաներն ունեն պաշտպանված տարածք, իսկ մյուս կողմից՝ այլ նախաձեռնությունների և նորարարական գաղափարների հետ բախումն, ընդհանուր առմամբ, ինդիվիդուալ լուծման կամ զարգացման նորարարական գործընթացների ավելի շատ տարբերակներ է ի հայտ բերում:
- 3.2** Բազմակարծություն երաշխավորող հասարակությունը նաև մարդկային առումով ավելի մեծ երջանկության հնարավորություն է ստեղծում, քանի որ այն բազմաբնույթ է դարձնում մարդկային շփումները: Համատեղ գործողություն ենթադրող համայնքային փորձառությունը մարդկային երջանկության աղբյուրներից մեկն է:

## 4

## ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՀԱՓԱՔԱՆԱԿ

- 4.1** Մշտապես զուտ անհատականության գոյությունը հանգեցնում է քաոսի: Տնտեսական գործընթացների համար անհրաժեշտ են նորմեր և վստահելիություն: Մեր մարդկային հոգեկան կենսագործունեության համար մեզ նույնպես անհրաժեշտ է վստահելիություն:
- 4.2** Որպեսզի կյանքի անխուսափելի կանոնակարգման արդյունքում կրկին չկորցնենք անհատականությունը, պետք է սահմանափակվի պարտավորությունների շրջանակը: Ազատության անձեռնմխելի տարածքը որպես կանոն նկարագրված է մարդու իրավունքների տեսքով: *(Տ. Լոք)*
- 4.3** Որպեսզի ակնկալվող պարտավորությունները բարձր ներքին լեզիտիմություն ձեռք բերեն, անհրաժեշտ է դրանց ձևավորման համար ապահովել տվյալ անձանց մասնակցությունը: *(Ժ.ժ. Ռոլան)*

## 5

## ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՄԻ ՇԱՐՔ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

- 5.1** Մարդկանց անհրաժեշտ է ազատ խոսքի կոմպետենցիա:
- 5.2** Մարդկանց անհրաժեշտ է քննադատական դատողության կոմպետենցիա:
- 5.3** Մարդկանց անհրաժեշտ է համատեղ գործողությունների համար պարտավորությունների, գործողությունների և նպատակների շուրջ պայմանավորվածությունների ձեռքբերման և որոշումների ընդունման կոմպետենցիա:



UNUSUTUUN  
UNUSUTUUN  
UNUSUTUUN  
UNUSUTUUN  
UNUSUTUUN



## ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՆԵՐ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

համագործակցային հարաբերությունների և ցանցերի ստեղծում, կառավարում

կրթության գլոբալ պատկերը և խնդիրները, ինչպես նաև դպրոցի և առկա գլոբալ խնդիրների միջև կապեր ստեղծելու, տեսնելու կարողություն

մարդակենտրոն կառավարման ունակություն և կարողություն՝ ստեղծելով մասնագիտական աճի և ինքնաիրացման հնարավորություն ուսուցիչների համար

խնդիրների արագ բացահայտում և արդյունավետ լուծումների սահմանում

թիմային աշխատանքի հմտություններ և ունակություն


կրթական համաշխարհային միտումների և զարգացումների մասին տեղեկացվածություն

կրթության մասին սեփական տեսլականի սահմանում

հավակնոտ և իրատեսական նպատակների սահմանման կարողություն, այդ նպատակներին հասնելու համար քայլերի ձեռնարկում

Նախաձեռնողականություն

երեխայակենտրոն և մարդասիրական արժեքների կրում



## ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

անընդհատ ինքնակրթվելու ունակություն

երեխաների կրթության և դաստիարակությանն առնչվող կարծրատիպերից ազատ մտածելու, գործելու ունակություն

փորձարկումների և դրանցից դասեր քաղելու, ինչպես նաև արդյունքները վերլուծելու պատրաստակամություն

արդյունավետ համագործակցության հմտություններ

ստեղծագործական միտք և անսահման երևակայություն

կրթական արդի միտումների և զարգացումների մասին համապարփակ տեղեկատվության տիրապետում

մեծը տեսնելու, համապատասխան իրատեսական գործողություններ սահմանելու և սինեթիաներ ստեղծելու ունակություն



## ՓՈՐՁՆԱԿԱՆ ԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԴՐԱԿԱՆ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՀԱՄԱՐ

Փորձեք դրական հետադարձ կապ ապահովել Ձեր աշխատակիցների հետ և հավաքել Ձեր փորձառությունը:

### Քայլերի հաջորդականության առաջարկ

Ընտրեք Ձեր գործընկերներից երեք հոգու

**ա** | առանձնահատուկ կարողություններ ունեցող ուսուցիչներից մեկին

**բ** | միջին կարողություններ ունեցող ուսուցիչներից մեկին

**գ** | աչքի չընկնող կամ «աշխատանքային խնդիրներ» ունեցող ուսուցիչներից մեկին

Մանրակրկիտ ուսումնասիրեք տվյալ գործընկերոջ աշխատանքը և պարզեք նրա առանձնահատուկ հմտությունները և ուժեղ կողմերը: Հաճախ այդ հատկանիշները հայտնաբերվում են անձի ավելի ուշադիր դիտարկման դեպքում:

Մտածեք, թե տվյալ հատկանիշները կամ աշխատակցի հատուկ ներգրավվածությունն ինչով են կարևոր առանձին աշակերտների կամ ուսուցչական անձնակազմի համար:

Տվյալ աշխատակցի հետ հաջորդ հանդիպումն օգտագործեք՝ ստեղծելով «պատահական» մի իրավիճակ, երբ Դուք տվյալ անձի հետ բոլորովին այլ թեմա եք քննարկում և ի միջի այլոց նշում եք Ձեր դիտարկումների կամ ընդհանրական գնահատականի մասին: Ընդ որում, անպայման հիմնավորեք աշխատակցի վարքագծի կամ դրսևորած հատկանիշների արժեքը:



# ՕՐԻՆԱԿՆԵՐ

Դուք գրուցում եք Ձեր գործընկերոջ հետ ինչ-որ կազմակերպչական հարցի մասին և գրույցն ավարտում եք հետևյալ բառերով. «Ի դեպ, երեկ նկատեցի, թե ինչպես եք դպրոցի բակում խոսում աշակերտներից մեկի հետ, որը շատ տխուր էր: Ձեր խոսքից հետո երեխան շնորհակալական հայացքով ժպտաց: Կարծում եմ, որ այդ երեխան լավ տրամադրությամբ հաջորդ դասին ավելի լավ կսովորի: Դուք մանկավարժական կարևոր ձիրք ունեք»:

«Երեկվա մեր ժողովի ժամանակ Դուք ներկայացրիք մի փոխզիջումային առաջարկ, որը բավականին լայն հավանության արժանացավ: Հավանաբար դա Ձեզ հաջողվեց, քանի որ նախապես շատ ուշադիր լսել էիք տարբեր կողմերի կարծիքները և լուրջ եք վերաբերվել դրանց: Նման քայլերն ուժեղացնում են բննարկումների մշակույթը մեր դպրոցում և նպաստում են մեր դպրոցի զարգացմանը»:

«Երեկ նկատեցի, թե ինչպես եք հետևում, որ երեխաները կարգապահությամբ դուրս գան դասասենյակից: Հետագայում երեխաները շնորհակալ կլինեն Ձեզ դրա համար, քանի որ դրանով նրանք սովորում են հետևել արտաքին կարգապահությանը: Մշակված արտաքին կարգապահությունն օգնում է մեզ նաև մեր կյանքում ունենալ լավ ներքին կարգապահություն»:

«Ձեր դասարանը առաջադիմության տեսանկյունից շատ լավ արդյունքների է հասել: Ինչպե՞ս եք կարողացել ապահովել այդ ամենը: Կարծում եմ, որ պատճառներից մեկն էլ այն է, որ Դուք Ձեր մասնագիտությանը շատ նվիրած կենսաբան/ֆիզիկոս եք և այդ նվիրվածությունը փոխանցում եք նաև Ձեր աշակերտներին: Նա, ով ոգեշնչված է իր առարկայով, ավելի հեշտությամբ է կարողանում լավ արդյունքներ ապահովել»:



מבצע מיוחד  
במחיר מיוחד  
במחיר מיוחד

## I

Յուրաքանչյուր մարդ կարևորվելու մեծ պահանջմունք ունի: Մարդկանց մեծամասնության համար անհատական արժևորումն ու կարևորության գնահատումը նյութական կարգավիճակից ավելի կարևոր են: Հաճախ այս հիմնական պահանջմունքը սխալմամբ նույնացվում է մարդու կարգավիճակն ընդգծող խորհրդանիշների հետ:

## II

Տնօրենները մեծ ազդեցություն ունեն գործընկերներին արժևորելու և կարևորելու սուբյեկտիվ ընկալման, ինչպես նաև դպրոցական համայնքում նրանց արժևորման վրա: Եթե տնօրենը ուսուցչի արժևորման միջոցով դրական խթան է ստեղծում ոչ միայն ուսուցիչների, այլև ծնողների շրջանում, ապա նա ազդում է դպրոցում տիրող մթնոլորտի վրա: Արդյունքում հնարավորություն է ստեղծվում, օրինակ, հասարակության մեծամասնության համար ավելի լավ հիմնավորել ուսուցիչների աշխատավարձի բարձրացման քաղաքական որոշումը:

## III

Ուսուցչի արժևորումը, նրա ներգրավվածության և անձնական առաջադիմության նկատմամբ հարգանքը դպրոցի պատասխանատու կառավարման կարևոր գործիքներ են: Այդ հատկանիշների արժևորումը կառավարման առանցքային կոմպետենցիաներից մեկն է: Սակայն արժևորումն ու գովեստը պետք է արժանահավատ լինեն, քանի որ հակառակ դեպքում դրանց հեղինակը դառնում է անվստահելի:

## IV

Դրական արժևորման մթնոլորտի ստեղծումը ոչ միայն դպրոցի ղեկավարության գործն է, այլև անձնակազմի և դպրոցական համայնքի բոլոր անդամների, որոնք նույնպես պատասխանատու են դրա համար: Գովեստի, ճանաչման և արժևորման միջոցով ենք իմաստավորող վարքագիծ դրսևորում: Մենք ընդգծում ենք տվյալ անձի դրական ներգործությունը և ցույց ենք տալիս նրան, թե ինչքան կարևոր է ամբողջի մեջ իր մասնակցությունը:

## V

Արժևորումը, ճանաչումը և գովեստը պետք է լինեն որոշակի, հիմնավոր, հասկանալի, այլոց նկատմամբ արդար:



# «ԿԱՆՃ ԽՈՍՔԻ» ՍԿՈՒԹՂԻՍՏԻԿ ԿԵՏԵՐԻ ՄԵԹՈԴԸ

Շատ քննարկումներ ձախողվում են այն պատճառով, որ դրանք դուրս են գալիս նախատեսված սահմաններից և մասնակից բանախոսները չափազանց երկար ու զուգահեռաբար են խոսում: Հաճախ հենց այս պատճառներով մասնակցային ժողովները վարկաբեկվում են, քանի որ երկար են տևում և ստացված արդյունքը շատ փոքր է լինում:

Այդ իսկ պատճառով խոսքի ընթացքում կարևոր է.

- հնարավորինս կարճ ձևակերպել մտքերը
- վերջում հստակ եզրահանգում անել որոշման սպասող հարցի վերաբերյալ
- մշտապես հղում կատարել նախորդ բանախոսների տեսակետներին



Դեռ անտիկ շրջանից ընդունված է եղել խոսքը բաժանել առավելազույնը հինգ կետերի: Հետտորության ժամանակակից դասընթացներն ընդօրինակել են այս ավանդույթը:

Ստորև ներկայացնում ենք 5 կետերի մեթոդի մի քանի մոդելներ՝ համապատասխան օրինակներով:

## 5 կետերի մոդել

# Ա

- Ներածություն
- Առաջին փաստարկ
- Երկրորդ փաստարկ
- Երրորդ փաստարկ
- Եզրահանգում

Թեմա	Արդյո՞ք պետք է արգելել բջջային հեռախոսների օգտագործումը դասի ժամանակ
Ներածություն	Բջջային հեռախոսներն օգնում, թե՞ խանգարում են դասին:
Առաջին փաստարկ	Աշակերտները չեն կենտրոնանում դասի վրա, օրինակ՝ մշտապես ստուգում են հաղորդագրությունները:
Երկրորդ փաստարկ	Աշակերտները բջջային հեռախոսներն օգտագործում են որպես ժամանակակից հուշաթերթիկներ:
Երրորդ փաստարկ	Աշակերտները վնասում են իրենց տեսողությունը մանր տառատեսակների պատճառով:
Եզրահանգում	Բջջային հեռախոսները խանգարում են դասը, վտանգում են դպրոցականների ֆիզիկական և հոգեկան առողջությունը և խոչընդոտում են ուսումնական առաջադիմությանը:

ՕՐԻՆԱԿ 1



## 5 կետերի մոդել



- Հիմնախնդիր
- «Կողմ» փաստարկներ
- «Դեմ» փաստարկներ
- Եզրահանգում
- Հորդոր

Թեմա	Պատիժ, թե՞ խրախուսանք
Հիմնախնդիր	Արդյո՞ք դպրոցական մանկավարժության մեջ պետք է վերացնել պատժելու մոտեցումը:
«Կողմ» փաստարկ	Երեխաները ավելի շատ քաջալերվում են գովեստի, քան պատժի միջոցով:
«Դեմ» փաստարկ	Եթե պատիժը վերացվի, ապա երեխաները կարող են մտածել, որ ամեն ինչ թույլատրված է:
Եզրահանգում	Ճիշտ վարքի և լավ առաջադիմության համար միշտ պետք է գովել երեխային, սակայն սխալ վարքի դեպքում, այդուհանդերձ, անհրաժեշտ է պատժամիջոցներ կիրառել:
Հորդոր	Մեզ անհրաժեշտ է դպրոցում ունենալ գովեստի, քաջալերման և պատժի արդյունավետ լիարժեք հայեցակարգ:

## ՕՐԻՆԱԿ 2

Թեմա	Սովորել դպրոցում, թե՞ հասարակության մեջ
Հիմնախնդիր	Արդյո՞ք պետք է աշակերտներին ավելի հաճախ դուրս տանել դպրոցից:
«Կողմ» փաստարկ	Դպրոցը պետք է նախապատրաստի կյանքին, այդ իսկ պատճառով դպրոցը պետք է լինի բուն կյանքի մեջ:
«Դեմ» փաստարկ	Դպրոցից դուրս դասերը շատ ժամանակ են պահանջում և ուսումնական պլանի բովանդակության համար ժամանակը չի բավարարում:
Եզրահանգում	Մեզ անհրաժեշտ է դպրոցում և դպրոցից դուրս դասերի արդյունավետ համատեղում:
Հորդոր	Մենք պետք է վերանայնեք մեր վերաբերմունքը ուսումնական պլանների նկատմամբ:

## ՕՐԻՆԱԿ 3

## 5 կետերի մոդել

### Գ

- Թեզիս
- Փաստարկ
- Հիմնավորում
- Առավելություն
- Հորդոր

### Թեմա

Արդյո՞ք պետք է զարգացնել հանքարդյունաբերությունը Հայաստանում

### Թեզիս

Հանքարդյունաբերությունը գրավիչ բնավայրերում վնասում է Հայաստանին:

### Փաստարկ

Տուրիզմը մեզ համար ավելի կարևոր է, քան հանքարդյունաբերությունը:

### Հիմնավորում

Տուրիզմը Հայաստանի եկամուտների գլխավոր աղբյուրներից մեկն է:

### Առավելություն

Տուրիզմը կարող ենք զարգացնել սեփական ուժերով:

### Հորդոր

Մասնակցե՞ք հանքարդյունաբերության հետագա զարգացման դեմ ստորագրահավաքին:

## Օրինակ 4



## 5 կետերի մոդել



- Անդրադարձ նախորդ բանախոսի փաստարկին
- Նախորդ բանախոսի եզրահանգում
- Դատողություն նախորդ բանախոսի փաստարկի մասին և հիմնավորում
- Սեփական փաստարկ
- Եզրահանգում

### Թեմա

Ուսուցիչների գերծանրաբեռնվածություն

Անդրադարձ  
նախորդ  
բանախոսի  
փաստարկին

Դու ասացիր, որ ուսուցիչների մեծ մասը ստիպված է դպրոցից դուրս նույնպես աշխատել:

Նախորդ  
բանախոսի  
եզրահանգում

Դու եզրակացրիր, որ հայ ուսուցիչներն այդ պատճառով չեն կարող դպրոցում նոր առաջադրանքներ ստանձնել:

Դատողություն  
նախորդ բան-  
ախոսի փաս-  
տարկի մասին և  
հիմնավորում

Ուսուցիչների եկամուտների մասին պնդումը ճիշտ էր, բայց եզրահանգումը խնդրահարույց է:

Սեփական  
փաստարկ

Ուսուցիչների աշխատավարձը Հայաստանում անհրաժեշտ է զգալիորեն բարձրացնել:

Եզրահանգում

Այդ դեպքում ուսուցիչները կկարողանան լիարժեք կերպով նվիրվել դպրոցի աշխատանքին:



## ԻՐԻՆԱԿ 6

Թեմա	Ուսուցիչների թիմային աշխատանք
Անդրադարձ նախորդ բանախոսի փաստարկին	Դու ասացիր, որ ուսուցիչների մեծ մասին չի հետաքրքրում սեփական առարկաներից դուրս թիմային աշխատանքը:
Նախորդ բանախոսի եզրահանգում	Դրանից դու եզրակացրիր, որ այդ պատճառով հայ ուսուցիչները շատ քիչ են համագործակցում:
Դատողություն նախորդ բանախոսի փաստարկի մասին և հիմնավորում	Ես կարծում եմ, որ խնդիրը ոչ թե հետաքրքրված չլինելն է, այլ առկա պայմանները:
Սեփական փաստարկ	Եթե ուսուցիչներից յուրաքանչյուրը դասավանդեր մեկից ավելի առարկա, ապա նրանք ինքնաբերաբար ավելի շատ կաշխատեին մյուսների հետ:
Եզրահանգում	Նաև այս նպատակով լավ կլիներ, որ ուսուցիչները մանկավարժական կրթության ընթացքում ձեռք բերեին երկու մասնագիտացում:

## ԻՐԻՆԱԿ 7

Թեմա	Ուսուցիչների թիմային աշխատանք
Անդրադարձ նախորդ բանախոսի փաստարկին	Դու ասացիր, որ ուսուցիչների մեծ մասին չի հետաքրքրում սեփական առարկաներից դուրս թիմային աշխատանքը:
Նախորդ բանախոսի եզրահանգում	Դրանից դու եզրակացրիր, որ այդ պատճառով հայ ուսուցիչները շատ քիչ են համագործակցում:
Դատողություն նախորդ բանախոսի փաստարկի մասին և հիմնավորում	Ես կարծում եմ, որ խնդիրը ոչ թե ժամանակի բացակայությունն է, այլ դրական փորձի պակասը:
Սեփական փաստարկ	Ուսուցիչները նախ պետք է փորձով համոզվեն, որ համագործակցությունը հանգեցնում է ժամանակի խնայողության:
Եզրահանգում	Այդ պատճառով դպրոցի տնօրինությունները պետք է հոգան, որ համագործակցային մոդելային դասապատրաստում իրականացվի: Այդ դեպքում ուսուցիչները կարող են դրական փորձ ձեռք բերել:



# ԿՈՆՖԻԿՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ՍԳՂԻՍԵՎԻՅՈՒՆԵՐ

Կոնֆիկտային իրավիճակներում  
գործելու

**5** հիմնական  
մոտեցումներ



**ԲՈՒ**

**Խնդիր լուծող** | Կոնֆլիկտային իրավիճակներում այս ռազմավարությամբ գործող մարդիկ մեծապես կարևորում են իրենց նպատակները և հարաբերությունները: Երբ նպատակներն ու հարաբերությունները կարևոր են, մարդը հակված է կոնֆլիկտին վերաբերվել որպես խնդրի, որը պետք է լուծել:



**ԱՐՁ**

**Մեղմացնող** | Նման գործելակերպ դրսևորող մարդկանց համար հարաբերությունների պահպանումը առաջնային է, իսկ նպատակներին հասնելը՝ երկրորդական: Նման վարվելակերպի դեպքում մարդիկ հրաժարվում են իրենց նպատակներից՝ հանուն հարաբերությունների պահպանման: Երբ մտածում եք, որ ուրիշի հնարավորություններն ավելի մեծ են, զիջում եք:



**ՇՆԱՁՈՒԿ**

**Հաղթանակ-պարտություն պարտադրող** Շնածկները փորձում են պարտադրել իրենց ընդդիմախոսներին զիջել: Այս դեպքում նպատակը շատ ավելի կարևոր է համարվում, քան հարաբերությունների պահպանումը: Պայքարը միայն հաղթանակի համար է:



**ԱՂԿԵՄ**

**Փոխզիջման գնացող** | Աղվեսների համար նպատակներն ու հարաբերությունների պահպանումը չափավոր կարևորություն ունեն: Նրանք կարող են զիջել նպատակների մի մասը, ինչ-որ չափով վնասել հարաբերությունները՝ լուծման հասնելու համար:



**ԿՐԻԱ**

**Նահանջող** | Կրիաները փակվում են իրենց վահանակի մեջ՝ կոնֆլիկտից խուսափելու համար: Այս դեպքում ոչ նպատակներն են կարևոր, ոչ էլ հարաբերությունների պահպանումը:



## Կոնֆլիկտային իրավիճակներում գործելու ռազմավարություններ

Ընթերցե՛ք հաջորդիվ ներկայացվող պնդումները և գնահատե՛ք Ձեր վարքագիծը՝ ըստ ստորև ներկայացվող գնահատման սանդղակի:

**5** | Ես հենց այդպես եմ վարվում

**4** | Ես հաճախ եմ այդպես վարվում

**3** | Երբեմն ես այդպես եմ վարվում

**2** | հազվադեպ եմ այդպես եմ վարվում

**1** | Ես երբեք այդպես չեմ վարվում



- 1 | Ավելի հեշտ է վեճից խուսափելը, քան վեճում զիջելը:
- 2 | Եթե դու չես կարող ուրիշին ստիպել մտածել քեզ նման, ապա ստիպիր նրան անել այն, ինչ դու ես մտածում:
- 3 | Նուրբ խոսքերը հաղթում են ծանր սրտերին:
- 4 | Ես՝ քեզ, դու՝ ինձ:
- 5 | Արի միասին լուծենք խնդիրը:
- 6 | Երբ երկուսը վիճում են, առավել խրախուսելի է նրանցից առաջինը լռողը:
- 7 | Կարողանալը միշտ հաղթում է ճշմարտությանը:
- 8 | Փափուկ խոսքերը երաշխավորում են փափուկ ընթացք:
- 9 | Ավելի լավ է մի բռնոն, քան՝ ոչինչ:
- 10 | Ճշմարտությունն իմացության մեջ է, ոչ թե մեծամասնության կարծիքի:
- 11 | Հեռու մնացե՛ք այն մարդկանցից, որոնք ձեզանից տարբեր են և համակարծիք չեն ձեզ հետ:
- 12 | Հաղթում են նրանք, ովքեր հավատում են իրենց հաղթանակին:
- 13 | Բարի խոսքերը թանկ արժեն, բայց քիչ են գնահատվում:
- 14 | Հավասար փոխանակումը վեճ չի առաջացնում:
- 15 | Միայն նա, ով պատրաստ է հրաժարվել ճշմարտության մենաշնորհից, կարող է օգտվել այլոց ճշմարտություններից:
- 16 | Խուսափե՛ք կռվարար մարդկանցից, քանի որ նրանք ձեր կյանքը կդարձնեն թշվառ:
- 17 | Նա, ով չի փախչում, ստիպում է, որ մյուսները փախչեն:
- 18 | Փափուկ խոսքերն ապահովում են ներդաշնակություն:
- 19 | Լավ նվերը կարող է ընկերության հիմք դառնալ:
- 20 | Ձեր կոնֆլիկտների մասին խոսե՛ք բաց և ուղղակի: Միայն այդ դեպքում կգտնե՛ք լավագույն լուծումները:



- 21** | Կոնֆլիկտների լուծման լավագույն ձևը դրանցից խուսափելն է:
- 22** | Ուտքդ դիր այնտեղ, որտեղ ուզում ես կանգնել:
- 23** | Հեզությունը կհաղթի բարկությանը:
- 24** | Քո ուզածի մի մասը ստանալը ավելի լավ է, քան ոչինչ չստանալը:
- 25** | Անկեղծությունը, ուղղամտությունը և վստահությունը սարեր կշարժեն:
- 26** | Կյանքում չկան այնպիսի բաներ, որոնց համար արժե կոնֆլիկտ ստեղծել:
- 27** | Աշխարհում կան երկու տեսակի մարդիկ՝ հաղթողներ և պարտվողներ:
- 28** | Եթե որևէ մեկը ձեզ խփում է քարով, դուք խփեք բամբակով:
- 29** | Երբ կողմերը զիջում են, արդար լուծումը հնարավոր է դառնում:
- 30** | Անընդհատ փորփրելով կարելի է հասնել ճշմարտության:

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Բոլոր պնդումները գնահատելուց հետո սովորողներին տվեք գնահատման թերթիկը, որում նրանք կնշեն, թե յուրաքանչյուր պնդման համար որ միավորն է ընտրվել:

Այնուհետև, ըստ սյունակի, աշակերտներին հրահանգեք գումարել թվերը՝ ամեն սյունակի համար ստանալով ամբողջական հանրագումար:

**Օրինակ՝** Ենթադրենք 1-ին պնդման համար սովորողն ընտրել է 2-ը (հազվադեպ եմ այդպես վարվում), 6-ի համար՝ 5-ը, 11-համար՝ 4-ը, 16-ի համար՝ 5-ը, 21-ի համար՝ 4-ը, 26-ի համար՝ 4-ը:

Ընդհանուր հանրագումարը կդառնա 24:

Յուրաքանչյուր սյունակի համար հանրագումարը դուրս բերելուց հետո այն սյունակը, որում սովորողը հավաքել է ամենաբարձր միավորը, առավել բնորոշ է իրեն:

**Օրինակ`** եթե սովորողի ամենաբարձր հանրագումարը/միավորը ստացվել է 3-րդ սյունակում, ապա նա կոնֆլիկտային իրավիճակներում ավելի շատ դրսևորում է Մեղմացնողի վարքագիծ:

Այս ոճերը բացարձակ և կատեգորիկ չեն, և կոնֆլիկտային մի իրավիճակում մարդը կարող է իրեն պահել Չիջողի պես, մեկ այլ իրավիճակում՝ Պարտադրողի:

 Լահանջ	 Պարտադրում	 Մեղմացում	 Փոխզիջում	 Խնդրի լուծում
<u>1</u>	<u>2</u>	<u>3</u>	<u>4</u>	<u>5</u>
<u>6</u>	<u>7</u>	<u>8</u>	<u>9</u>	<u>10</u>
<u>11</u>	<u>12</u>	<u>13</u>	<u>14</u>	<u>15</u>
<u>16</u>	<u>17</u>	<u>18</u>	<u>19</u>	<u>20</u>
<u>21</u>	<u>22</u>	<u>23</u>	<u>24</u>	<u>25</u>
<u>26</u>	<u>27</u>	<u>28</u>	<u>29</u>	<u>30</u>



ԿՈՍՄԵՏԵԼՑԻԱՆԵՐԻ

ՎՐԱ ՀԵՆՎՈՂ

ՆԻՍՈՒՑՈՒՄ

**Կոսպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթությունը** գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների համակարգ է, որը հնարավորություն է տալիս սովորողին օգտագործել գիտելիքի վրա հենվող կարողություններ և հմտություններ՝ պատշաճ և արդյունավետ կերպով արձագանքելու տարատեսակ իրավիճակներին:



- Կոմպետենտություն
- Առանցքային կոմպետենցիաներ
- Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված 12 տարրեր
- Պահանջների մակարդակներ
- Առաջադրական բայեր
- Ուսուցիչների կողմից կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասի պլանավորում
- Կոմպետենցիաների զարգացման մոդելներ
- Խմբային աշխատանքը խթանող մեթոդներ
- Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասի գնահատում
- Փորձնական առաջադրանքներ տնօրենների և ուսուցիչների համար

# ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱԿԱՆ

Կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման համար մեծ դեր է խաղացել 1996թ-ի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Նախկին ղեկավար Ժակ Դելորի գեկույցը, որում Նա ներկայացրեց կրթության **4 հիմնասյուները**.



## ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱԿԱՆ ԲԱՆԱԶԵՎ

### Կոմպետենտությունը

$$\begin{aligned} &= \\ &\text{Գիտելիքներ} + \text{Հմտություններ} + \text{Դիրքորոշումներ} \\ &= \\ &\text{Գործողություն} \end{aligned}$$

- 1** | **Գիտելիքները** ներառում են փաստեր, թվեր, գաղափարներ, տեսություններ, որոնք նպաստում են տվյալ առարկայի և խնդրի հասկացմանը:
- 2** | **Հմտությունները** կոնկրետ գործողություններ կատարելու և ունեցած գիտելիքները արդյունքների հասնելու համար օգտագործելու կարողություն են:
- 3** | **Դիրքորոշումները** սկզբունքներ են, որոնց հիման վրա մարդն արձագանքում է գաղափարներին, այլ մարդկանց և իրավիճակներին: Որոշ մասնագետներ կոմպետենցիաների կազմում են ընդգրկում են նաև արժեքները և մոտիվացիան:

### Կոմպետենցիան`

գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ինտեգրված հավաքածու է, որոնք միավորվում են որոշակի համատեքստում որոշակի խնդիրներ լուծելու համար: *(Մ. Սյուպեր)*

անհատների մոտ առկա կամ նրանց կողմից սովորելու միջոցով ձևավորվող ճանաչողական կարողություններ և հմտություններ, որոնք ուղղված են խնդիրների լուծմանը, ինչպես նաև դրանց հետ կապված մոտիվացիոն, կամային և սոցիալական պատրաստություն, ինչն անհրաժեշտ է խնդիրների լուծումները տարբեր իրավիճակներում հաջողությամբ և պատասխանատու կերպով կիրառելու համար: *(Ֆ. Վայներտ)*

## ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ

Կարողություններն ու հմտությունները փոխկապակցված հասկացություններ են և հաճախ դժվար են տարբերակվում:

**Կարողությունները** սահմանվում են որպես անհատի ունեցած կամ ժառանգաբար ձեռք բերած նախադրյալներ կամ ներուժ:

### ՕՐԻՆԱԿ՝

Անհատն ունի երաժշտական բնատուր կարողություններ՝ լսողական, երգելու և այլն:

**Հմտությունները** հենվում են արդեն իսկ առկա մեծ կամ փոքր կարողությունների վրա, սակայն ձևավորվում և ձեռք են բերվում արդեն վարժության, փորձառության, հասունության, լրացուցիչ գիտելիքների, ինչպես նաև մոտիվացիայի և կամքի միջոցով: Ձեռք բերված հմտությունները հնարավորություն են տալիս ձևավորել նորանոր այլ հմտություններ:

### ՕՐԻՆԱԿ՝

Դաշնամուր նվագելը սովորում են վարժության արդյունքում:

ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

| COMPETENCY |

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ABILITIES |

ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| SKILLS |



## ԱՎԱՆԴԱԿԱՆ ԴԱՍ

Սովորողները պասիվ են: Հիմնականում լսում են:

Հիմնականում գործում է ուսուցիչ-աշակերտ կապը:

Ուսուցիչը, ըստ թեմատիկ պլանի, ծրագիրն  
 «անցնում է»:

Ուսումնական նյութը ծավալուն է: Հաճախ  
 կարևորն ու անկարևորը տարբերակված չեն:

Ուսումնառության նպատակները ոչ միշտ են  
 չափելի և թափանցիկ:

Շեշտը դրվում է գիտելիքների, հմտությունների  
 ուսուցման վրա:

Կարևորվում է ուսումնական առարկաների անջատ  
 ուսուցումը:

Կարևորվում է ուսումնական նյութի մեխանիկական  
 վերարտադրությունը՝ առանց մտածողության  
 հմտությունների, գործնական հմտությունների հետ  
 կապակցելու:

Սովորողները անհատական մոտեցման են ար-  
 ժանանում միայն այն դեպքում, եթե նրանց  
 ակադեմիական ձեռքբերումների մակարդակը շատ  
 բարձր է կամ շատ ցածր:

Հիմնականում օգտագործվում է ամփոփիչ, գնահա-  
 տանիչով գնահատումը: Թվանշանն օգտագործվում  
 է աշակերտներին դասդասելու համար:



## ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԱՍ

Սովորողներն ակտիվ են: Բացի լսելուց՝ հնարավորություն ունեն հարցեր տալու, կարծիք հայտնելու:

Բացի ուսուցիչ-աշակերտ կապից՝ գործում է աշակերտ-աշակերտ ուսուցողական կապը:

Ուսուցիչը չի անցնում հաջորդ թեմային, քանի դեռ աշակերտները չեն յուրացրել թեմայի առանցքային գաղափարները:

Ուսումնական նյութը կառուցված է առանցքային կոմպետենցիաների և գաղափարների շուրջ:

Ուսումնառության նպատակները չափելի են և թափանցիկ են սովորողների համար:

Գիտելիքների և հմտությունների ուսուցումից զատ՝ կարևորվում է նաև արժեքների և վերաբերմունքի ուսուցումը:

Առարկաների ուսուցման միջոցով զարգացվում են վերառարկայական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են խնդիրների լուծումը, քննադատական մտածողությունը, համագործակցությունը:

Ուսումնական նյութի մեջ կարևորվում է բովանդակության խորը ըմբռնումը և դրա կապակցումը ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների հետ:

Սովորողները ստանում են իրենց կրթական կարիքներին համապատասխանող աջակցություն:

Օգտագործվում են գնահատման տարբեր մոտեցումներ: Շեշտը դրվում է ձևավորող գնահատման վրա: Գնահատականն օգտագործվում է աշակերտների առաջընթացը չափելու համար:



# ԱՆԱՆՑՔԱՅԻՆ ԿՈՄԱԿԵՆՏԵՆԳԻԱՆԵՐ

**Առանցքային կոմպետենցիաները** համապարփակ կոմպետենցիաներ են, որոնք անհրաժեշտ են անձի զարգացման, հասարակական կյանքին ակտիվ մասնակցության, ինչպես նաև տարբեր ռեսուրսների շարունակական ողջամիտ օգտագործման համար:

- Լեզվական կոմպետենցիա և գրագիտություն
- Սովորել սովորելու կոմպետենցիա
- Ինքնաճանաչողական և սոցիալական կոմպետենցիա
- Ժողովրդավարական և բաղաբացիական կոմպետենցիա
- Թվային և մեդիա կոմպետենցիա
- Մշակութային կոմպետենցիա
- Մաթեմատիկական և գիտատեխնիկական կոմպետենցիա
- Տնտեսական կոմպետենցիա


**Առանցքային կոմպետենցիաները** փոխկապակցված են միջ-առարկայական կապերով: Յուրաքանչյուր դասի համար սովորաբար նախատեսվում է մեկ հիմնական (որպես կանոն՝ առարկայական) և մի քանի երկրորդական կոմպետենցիա (որպես կանոն՝ առանցքային):

Հանրակրթական համակարգը կոչված է ձևավորելու հետևյալ առանցքային կոմպետենցիաները՝



## ԼԵՉՎԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱ ԵՎ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային կյուլթեր:





## ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱ

Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, ձևավորում են ինտելեկտուալ խոնարհություն և սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:



## ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱ

Սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ, և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները: Աշակերտները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և համագործակցային, կոնֆլիկտների խաղաղ կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում սովորողներն ընդունակ են ճանաչել դրանց տարբերությունները:



## Ժողովրդավարական եւ քաղաքացիական կոմիտեներ

Աշակերտները նպաստում են ժողովրդավարության, ազատության, սոցիալական արդարության և օրենքի գերակայության վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են ՀՀ Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողները արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:



## Թվային եւ մեդիա կոմիտեներ

Սովորողներն ունեն տեղեկատվական հոսքի մեջ կողմնորոշվելու հմտություն և մեդիագրագիտություն, ընդունակ են կառավարել մեդիայի սպառումը և թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների զուգահեռ գիտակցում են նաև դրա հետ կապված ռիսկերը: Նրանք ձևավորում են ժամանակակից տեխնոլոգիաների և զարգացման միտումների վերաբերյալ գիտելիք և դրա կիրառման հմտություններ, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Սովորողները կարողանում են սեփական ուժերով ստեղծել մեդիա արտադրանք:





## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱ

Սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Չայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և կյանքական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը, ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ:



## ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱ

Սովորողներն առօրյա կյանքում օգտագործում են մաթեմատիկական մտածողություն՝ բնության, հասարակության, մշակույթի և աշխատանքային ոլորտի երևույթները ճանաչելու և դրանք մաթեմատիկական կառուցվածքների, բանաձևերի, մոդելների, կորերի, ալյուսակների միջոցով հասկանալու համար: Աշակերտները դիտում, նկարագրում, ճանաչում և բացատրում են բնագիտական երևույթները, ձեռք բերված իմացության հիման վրա անում են եզրահանգումներ և ստուգում ապացույցները: Նրանք ընկալում են բնագիտական մտածողության և աշխատանքի, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի միջև եղած փոխադարձ կապը: Աշակերտներն ընկալում են տեխնոլոգիական գիտելիքի կիրառման հնարավորությունները մարդու պահանջմունքների համատեքստում, ճանաչում են մարդու գործունեության արդյունքում ի հայտ եկող փոփոխություններն ու սեփական պատասխանատվությունը:



## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱ

Աշակերտները համարժեք վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները: Նրանք հասկանում են հասարակության, տնտեսության և քաղաքականության միջև եղած փոխազդեցությունները և արժևորում են առողջ ու անվտանգ կենսակերպը: Աշակերտներն ընկալում են տնտեսական և հասարակական կարգերն ու ճանաչում են բնության և հասարակության փոխազդեցությունները, ինչպես նաև կայուն զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական դերն ու պատասխանատվությունը:



ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ  
ՁԵՎԱԿՈՐԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ  
12 ՏԱՌԵՐ



1

## ԱՇԱԿԵՐՏԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ

Արդյո՞ք թեմաներն ու մեթոդաբանությունը աշակերտական կողմնորոշում ունեն: Արդյո՞ք հաշվի է առնվում աշակերտների նախնական գիտելիքը:

2

## ԽՆԴՐԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ

Արդյո՞ք աշակերտներն ինքնուրույն ճանաչում են խնդիրը: Արդյո՞ք փոխանցվելիք առարկայական գիտելիքը ծառայում է խնդրի լուծմանը:

3

## ԱՎԵԼԻ ՇԱՏ ԿԱՌՈՒՑՈՒՄ, ՔԱՆ ՀՐԱՅԱՆԳՈՒՄ

Արդյո՞ք աշակերտներին ակտիվացնող դասաձևերն ունեն ավելի մեծ մասնաբաժին, քան ուսուցչակենտրոն ձևերը:

4

## ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Արդյո՞ք աշակերտը կարող է ինքնուրույն կազմակերպել դասապրոցեսի առանձին մասերը:

5

## ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ

Արդյո՞ք նախապես հստակեցված են կոմպետենցիայի ձեռքբերվելիք մակարդակները: Արդյո՞ք աշխատանքային առաջադրանքները բաժանված են աստիճանների:

6

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ԿԱՐՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Արդյո՞ք կիրառվող մեթոդները նպաստում են առարկայական և սոցիալական կոմպետենցիաների ձեռքբերմանը, ինչպես նաև աշակերտների ակտիվացմանը:



7

## ԿԱՆԽՈՐՈՇՈՒՄ

Արդյո՞ք տեղի է ունենում կոմպետենցիաների տարբերակված ստուգում կամ դասամիավորի սկզբում ուսումնական մակարդակի կանխորոշում:

8

## ԱՆՅԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ

Արդյո՞ք դասապրոցեսի ընթացքում աշակերտն ունի ժամանակային և բովանդակային ազատ տարածքներ: Արդյո՞ք քննարկվում են ուսման տարբեր ճանապարհներ:

9

## ԳՈՐԾԸՆԹԱՑԱՅԻՆ | ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Արդյո՞ք ձեռք բերված կոմպետենցիաներն ամրապնդվում են կրկնական և կուտակային ուսուցման միջոցով: Արդյո՞ք պլանավորման համար ելման կետ է ընդունվում նպատակը:

10

## ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Որտե՞ղ կարող է աշակերտը ցուցադրել իր ձեռք բերված կոմպետենցիան: Արդյո՞ք ուսումնական գործընթացը հանգում է գնահատման ենթակա արդյունքի:

11

## ՈՒՍՈՒՑՈՒՄ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ

Ո՞ր կոնկրետ օրինակը կարող է ծառայել կոմպետենցիայի ձեռքբերմանը: Ինչքանո՞վ է անհրաժեշտ կատարել դիդակտիկ կրճատումներ:

12

## ԱՆԴՐԱԴԱՐՁՄԱՆ | ՌԵՖԼԵԶՍԻՈՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Արդյո՞ք քննադատաբար անդրադարձ է կատարվում ուսումնական գործընթացին և կոմպետենցիաների ձեռքբերմանը: Արդյո՞ք ստացվում են աշակերտի նախնական գիտելիքի և ուսումնական գործընթացի մասին անհատական արձագանքներ:

## ԱՇԱԿԵՐՏԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Պատասխանե՛ք հետևյալ հարցերին և բացահայտե՛ք՝ արդյո՞ք աշակերտակենտրոն է Ձեր դասարանը:

Աշակերտակենտրոն դասարան	Այո	Ոչ
Արդյո՞ք աշակերտների համար ակնհայտ է, թե դասապրոցեստում ինչն է կարևոր. տեսլական, նպատակներ, գերակայություններ		
Արդյո՞ք աշակերտները գիտեն, թե ինչ են սովորում և ինչու		
Արդյո՞ք դասարանում առկա է անհատական, համագործակցող թիմի և խմբային մեծ աշխատանքների խառնուրդ		
Արդյո՞ք աշակերտները համագործակցում են, կիսվում ընդհանուր փորձով և սովորում միմյանցից		
Կա՞ն թափանցիկ ընթացակարգեր, որպեսզի աշակերտները կարողանան հետադարձ կապ տալ ուսումնական գործընթացի որակի վերաբերյալ		
Արդյո՞ք աշակերտներին նախապես ծանոթացնում են ուսումնական ծրագրի բովանդակությանը		
Արդյո՞ք աշակերտները տեղեկացված են ուսուցման նախատեսվող արդյունքների մասին՝ նախքան դասընթացը կամ ծրագրի բաղադրիչը սկսելը		
Արդյո՞ք աշակերտները ստանում են խորհրդատվություն դասավանդման և գնահատման մեթոդների վերաբերյալ		
Արդյո՞ք աշակերտները ներգրավված են դասընթացի որակի «գնահատման» գործընթացներում		
Արդյո՞ք կան պարզ ընթացակարգեր, որոնցով աշակերտները կարող են «բարձրաձայնել, բողոքարկել» դասարանական և դպրոցական որոշումները՝ կապված իրենց դասարանական, դպրոցական առօրյայի, նվաճումների կամ առաջընթացի հետ		



	Այո	Ոչ
Արդյո՞ք աշակերտների կարիքները և աշակերտական խմբի բազմազանությունը հաշվի են առնվում ուսումնառության առաջադրանքների և մեթոդների նախագծման ժամանակ		
Արդյո՞ք դպրոց/դասարան նոր մուտք գործող աշակերտները ստանում են աջակցություն, որպեսզի կարողանան հաղթահարել իրենց նոր միջավայրը (մշակութային, լեզվական)		
Արդյո՞ք կան հատուկ աջակցության միջոցառումներ, որոնք կօգնեն անբարենպաստ ընտանիքների աշակերտներին		
Արդյո՞ք ուսումնառության ուղիները բավականաչափ ճկուն են, որպեսզի թույլ տան ներառել նաև առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին		
Արդյո՞ք խմբային աշխատանքը օգտագործվում է ուսումնական գործընթացում		
Արդյո՞ք աշակերտների արտադպրոցական գործունեությունն ընդունվում և ճանաչվում է որպես ուսուցման փորձի էական մաս		
Արդյո՞ք աշակերտների հմտությունների զարգացումը ձեր ուսումնական գործընթացի նպատակներից մեկն է		
Արդյո՞ք ուսումնական գործընթացի նպատակները համաձայնեցված են ուսուցիչների և աշակերտների միջև		
Արդյո՞ք աշակերտների շրջանում ինքնազնահատումը օգտագործվում է որպես մեթոդ գնահատման գործընթացում		
Արդյո՞ք նախագծերը օգտագործվում են աշակերտների գնահատման գործընթացում		
Արդյո՞ք աշակերտներին տրվող առաջադրանքների, դրանց գնահատման գործընթացում օգտագործվում են իրական կյանքի իրավիճակներ, սիմուլյացիաներ		
Արդյո՞ք աշակերտներն ունեն համապատասխան հարմարություններ՝ անհատական, խմբային աշխատանքներ կատարելու անելու համար դասարանում/դպրոցում:		



# ՊԱՅԱՆՔՆԵՐԻ ԿԱԳԱՆՔՆԵՐԻ ՄԱԿԱՐՈՂԱԿՆԵՐԻ

Ուսման վերջնարդյունքները կոմպետենցիաներն են, որոնք պետք է լինեն թափանցիկ թե՛ ուսուցչի և թե՛ սովորողի համար: Այդ նպատակով կոմպետենցիաները գործառնականացվում են՝ ըստ սովորողին ներկայացվող պահանջների երեք մակարդակների: Դրանք օգնում են կոմպետենցիաները դարձնել չափելի և «շոշափելի»:

**Պահանջների մակարդակները** փոխկապակցված են: Ընդ որում, պահանջների 2-րդ մակարդակը ներառում է պահանջների 1-ին մակարդակը, իսկ պահանջների 3-րդ մակարդակն ընգրկում է առաջին երկու մակարդակները:

Չնայած պահանջների երեք մակարդակների միջև չկան հստակ սահմաններ, այդուհանդերձ, այդ մակարդակների կիրառումն էապես նպաստում է հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված կոմպետենցիաների վավերականության ստուգմանը և առաջադրանքների բարդության սահմանմանը, ինչպես նաև կրթության բոլոր մասնակիցների համար քննական արդյունքների գնահատման թափանցիկությանը:

Գոյություն ունի պահանջների երեք մակարդակ.

## I ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒՄ

Ներառում է առանձին ոլորտին վերաբերող իրողությունների վերարտադրում, նկարագրում՝ ուսուցման գործընթացի համատեքստում, ինչպես նաև յուրացված և փորձարկված աշխատանքային տեխնիկայի վերարտադրողական կիրառում.

- հիմնարար մասնագիտական գիտելիքի վերարտադրում՝ մասնագիտական լեզվի կիրառմամբ
- նյութի տեսակի որոշում
- տեղեկատվության քաղում տեքստային տարբեր տեսակներից և նյութերից
- աշխատանքային տեխնիկայի և մեթոդների սահմանում, կիրառում

## I ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄ

Ներառում է հայտնի իրողությունների ինքնուրույն մշակում, դասակարգում ու բացատրություն, ինչպես նաև յուրացված բովանդակությունների և մեթոդների համարժեք կիրառում այլ իրողությունների նկատմամբ.

- կառուցվածքային և ժամանակային կապերի բացատրում
- տարբեր իրողությունների ողջամիտ փոխկապակցում և դասակարգում
- առարկայական և արժեքային դատողությունների տարբերակում

## I ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ ԵՎ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Ներառում է անդրադարձ (ռեֆլեկտիվ) մոտեցում նոր հարցադրումների, կիրառվող մեթոդների և ձեռք բերված իմացության նկատմամբ, ինչի շնորհիվ կարելի է հանգել հիմնավորումների, հետևությունների, գնահատականների, դատողությունների և գործողությունների.

- տարբեր իրողությունների ինքնուրույն քննարկում
- կառուցվածքային, բազմատեսանկյուն և խնդրակենտրոն հարցադրման ձևավորում
- սեփական դատողության ձևավորման անդրադարձում
- գիտելիքի և իմացության խնդրակենտրոն, ստեղծագործական կիրառում



# ԱՊՅՈՒՄԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ

**Առաջադրական բայերը** ենթադրում են աշակերտների կողմից որոշակի գործողություն կատարելու ազդանշան: Դրանք դասակարգվում են ըստ աշակերտներին ներկայացվող պահանջների երեք մակարդակների:

Առաջադրականները հստակ սահմանում են առաջադրանքը և դրա հետ կապված **առաջադիմության պահանջները**:

*Առաջադրական բայերի սույն ցանկը մշակվել է «Մասնակցային դպրոց» ծրագրի աշխատանքային խմբի կողմից՝ հենվելով Մասնագիտական ուսուցման զարգացման եվրոպական կենտրոնի (CEDEFOP) առաջադրական բայերի ուղեցույցի վրա:*



Առաջադրական բայերը նախատեսված են բոլոր առարկաների համար և դրանով իսկ ստեղծում են միջառարկայական կապեր:

## I ՊԱՅԱՆՁՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿ I

Առաջադրական	Նկարագրություն
անվանել	Տրված նյութից քաղել տեղեկություններ կամ առանց տրված նյութի ներկայացնել գիտելիք
մշակել	Տրված նյութից քաղել տեղեկություններ ու իրողություններ և վերարտադրել դրանք
նկարագրել	Կապակցված և հիմնավորված կերպով վերարտադրել մանրամասն տեղեկություններ տրված նյութից կամ սեփական գիտելիքից
բնութագրել	Իրողությանը բնորոշ հատկանիշները նկարագրել կարևոր տեսանկյունից
վերարտադրել	Թվարկել տեղեկություններ տրված նյութից կամ պատմել սեփական գիտելիքից մի կարևոր խնդիր
ներկայացնել	Իրողությունների, համատեքստերի, մեթոդների և փոխադարձ կապերի կառուցվածքային վերարտադրում (ուրվագծում)
որոշել	Գտնել փոխադարձ կապեր կամ լուծումներ և ձևակերպել արդյունք
տեղայնացնել, տեղորոշել	Դեպքերի և տարածական օրինակների տեղադրում հայտնի տեղագրական/կոորդինատային ցանցում



## I ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿ II

Առաջադրական	Նկարագրություն
ստեղծել	Իրողությունները ներկայացնել բովանդակային և մեթոդական տեսանկյունից, օրինակ՝ մտքերի քարտեզի միջոցով (mind-map)
մասերի բաժանել	Արտահայտությունները տեղաբաշխել ըստ տրամաբանական հերթականության կամ ըստ համակարգային կառուցվածքի
դասակարգել	Նյութից քաղած առանձին տարրերը, ունեցած գիտելիքը կամ իմացությունը դասավորել որոշակի փոխկապակցվածության (համատեքստի) մեջ
բացատրել	Սեփական գիտելիքի օգնությամբ տեղեկությունները ներկայացնել այնպես, որ ունկընդորին կամ ընթերցողին հասկանալի լինի փոխկապակցվածությունը (համատեքստը)
պարզաբանել, ցուցադրել	Իրողությունը ներկայացնել ցուցադրական եղանակով
հիմնավորել	Նշել ինչ-որ բանի պատճառը, բարդ մտքերը զարգացնել փաստարկման միջոցով և դրանք տեղադրել համատեքստում: Այստեղ որոշիչ է մտքերի ընթացքի հիմնավորվածությունը
բնորոշել	Տարածքը կամ իրողությունը հիմնավոր կերպով բնութագրել՝ հիմք ընդունելով որոշակի չափանիշներ
վերլուծել	Իրողությունը պարզաբանել դրա բոլոր տարրերով և կապերով, այդ իրողության հետ կապված թիրախային հարցեր տալ, պատասխանել այդ հարցերին և հիմնավորել պատասխանները
համեմատել	Կշռադատել՝ համադրելով տարբերություններն ու ընդհանրությունները
ներկայացնել	Նյութերը կամ իրողությունները ենթարկել համակարգային և թիրախային ուսումնասիրության, դատողություններ անել և վերհանել կառուցվածքը

## I ՊԱՅԱՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿ III

Առաջադրական	Նկարագրություն
հիմնավորել	Փաստարկված հիմնավորմամբ զարգացնել բարոյ մտքեր և դրանք ներկայացնել տվյալ համատեքստում
գնահատել	Ստուգել արտահայտությունները, պնդումները, առաջարկությունները կամ միջոցառումները դրանց վավերականության կամ համարժեքության տեսանկյունից, և նշել կիրառվող չափանիշները՝ առանց անձնական դիրքորոշում արտահայտելու
դատել	Գնահատել արտահայտությունները, պնդումները, առաջարկությունները կամ միջոցառումները՝ բացահայտելով և անդրադարձնելով կիրառվող չափանիշներն ու արտահայտելով անձնական դիրքորոշում
քննարկել	Առաջադրված հիմնախնդրի վերաբերյալ անել հիմնավորված եզրակացություն՝ հաշվի առնելով կողմ և դեմ փաստարկները կամ ձևակերպել հիմնավորված կարծիք
ստուգել, վերստուգել	Ուսումնասիրել որոշակի իրողության մասին արված արտահայտությունները կամ պնդումները՝ դրանց համապատասխանության և համարժեքության տեսանկյունից, և ցույց տալ հնարավոր հակասությունները
դիրքորոշում հայտնել	Ինչ-որ պնդման կամ արտահայտության վերաբերյալ հայտնել սեփական հիմնավորված կարծիք
մեկնաբանել	Նկարագրել ինչ-որ իրողություն, բացատրել վերջինիս պատճառները, հետևություններ և դատողություններ անել այդ մասին
ձևավորել	Արդյունքի, դերերի կամ հասցեատերերի տեսանկյունից քննարկել ինչ-որ հիմնախնդիր՝ կազմելով ելույթներ և մոդելներ



ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂԱԽՑ  
ԿՈՍՏԱՆԿԱՆՍՏԱՆԻ  
ՁԵՎԱԿՈՆՍԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ  
ՂԱՍԻ ՊԼԱՆՎՈՐՈՒՄ

# ՍՈՎՈՐԵԼՈՒ ԲԱՐԴ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ (ԴԱՍԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ) ՆԱԽԱԳԾՈՒՄԸ



## ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

Ինչպե՞ս են դրանք արտահայտվում ?

Ի՞նչ գիտելիքներ/հմտություններ են սովորում երեխաները ?



## ԿԻՐԱՌՈՒՄ. ԻՄԱՍՏԱԼԻՑ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ



## ԱՌԱՆՅՔԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Ի՞նչ նոր համատեքստում են երեխաներն օգտագործում սովորածը ?

? Ո՞ր բովանդակություններն են պիտանի ?



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ պետք է հասկացած լինեն երեխաները ?

? Ո՞ր բովանդակությունները պետք է փոխակապակցվեն միմյանց հետ ?



## ՄԵԹՈԴՆԵՐ

? Ինչպե՞ս պետք է երեխաները մշակեն բովանդակությունները և լուծեն առաջադրանքները ?

## ՊԼԱՆԱՎՈՐՎՈՂ ԴԱՍԻ ԴԻԴԱԿՏԻԿ ՓՈԻԼԵՐ



Աշխուժացնել



Մեկնարել | Ակտիվացնել | Քաջալերել



Կողմնորոշել դեպի նպատակ | Ուղղորդել



Մշակել



Ամրապնդել | Ներկայացնել | Անդրադարձնել | Ապահովել




Կիրառել | Փոխանցել



Ամփոփել | Ուրվագծել հեռանկար

## ԴԱՍԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

Պլանավորումը գծային գործընթաց չէ: Պլանավորման մակարդակները միախառնվում են: Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասի նախապայմանը դասի համապատասխան կառուցվածքի ստեղծումն է:



## ԴԱՍԱԺԱՄԻ ՊԼԱՆԱԿՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿ

### ԴԱՍԱԺԱՄԻ ԳԻՄՆԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆ՝


Գործառնական հաղորդակցական կոմպետենցիա, կարողալ (տես՝ կոմպետենցիաների զարգացման մոդելներ)

Աշակերտները կարողում են «Uncommon Reader» գիրքը և կարողանում են նկարագրել գրքի կերպարներն ու գործողությունները, ինչպես նաև համեմատել ներկա ժամանակի հետ: Աշակերտները զարգացնում են իրականությանն առնչվող բնագիր տեքստերը (մամուլի հոդվածներ, ֆիլմերի տեքստեր) հասկանալու և բարդ նյութից կարևոր բովանդակությունն ու մանրամասները վերհանելու հմտություն:

### ԴԱՍԱԺԱՄԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

#### ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ՝

Ինքնաճանաչողական և սոցիալական, մշակութային, սովորելի սովորելու կոմպետենցիաներ:



Դասաժամի առանձին գործողությունների աղյուսակ  
(անգլերեն, 11-րդ դասարան)

Ժամանակ / դիդակտիկ փուլ	Ուսուցչի գործողություն
9:15-9:20 Առաջնորդել / ակտիվացնել 2՝	ՈՒ-ն ողջունում է դասարանին: ՈՒ-ը ցուցադրում է լուսանկար-կոլաժ (Մեծ Բրիտանիայի թագավորական ընտանիքը) ՈՒ-ը հղում է կատարում «Uncommon Reader» գրքին և բանավեճ խթանելու նպատակով մեջբերում է միապետության մասին Մեծ Բրիտանիայի թագուհու խոսքից մի հատված. « <b>I question the concept of Monarchy in our modern society ...</b> »
Կողմնորոշել դեպի նպատակ 1՝	ՈՒ-ն անդրադառնում է թագուհու բառերին և խոսում է դասաժամի նպատակի մասին. ... <b>Who am I to judge? I guess, each of you should have the chance to decide whether having a Monarchy is necessary.</b>
Ուղղորդել 2՝	Օգտագործվում է բաց տարածքի մեթոդը: ՈՒ-ը խթանում է առաջադրանքի հստակեցումը և օգնում է խմբեր կազմել:
9:20-9:45 Մշակում/Բաց տարածք World Cafe 10՝ (կարդալ)	ՈՒ-ը ստանձնում է խորհրդատուի դեր, մոտենում է խմբերին և անհրաժեշտության դեպքում օգնում: ՈՒ-ը քաջալերում է Ա-ին ամբողջ դասի ժամանակ խոսել անգլերեն: ՈՒ-ը հետևում է ժամանակին:
Քննարկում երեք փուլով, յուր. 5՝	

**Բացասական դիդակտիկ ռեզերվ՝ Բաց տարածքի վերջին փուլի կրճատում**

9.45-9.48 3՝ Անդրադարձում	ՈՒ-ն անցում է կատարում դասաժամի մյուս հատվածին: ՈՒ-ը տալիս է առաջադրանք՝ <b>You՝ll find a little crown on your table which you have to pin on the blackboard giving your opinion.</b> ՈՒ-ը հանձնարարում է Ա-ին ամփոփել արդյունքը:
9.48-9.58 Կիրառում / Տեքստի ստեղծում 10՝	ՈՒ-ը խթանում է առաջադրանքի հստակեցումը: <b>State your opinion by writing a tweet. You can use the table cloth as an inspiration.</b>

**Դրական դիդակտիկ ռեզերվ՝**

**Թվիթերյան գրառումների գնահատում աշակերտների կողմից**

9.58-10.00 Ամփոփում և հեռանկար 2՝	ՈՒ-ն ամփոփում է դասը և համառոտ ներկայացնում է հաջորդ դասաժամի բովանդակությունը: Վերջում՝ Թագուհու մեկնաբանությամբ տեսանյութը
---	---




Աշակերտի գործողություն	Աշխատանք	Նյութ / Նշումներ
<p>Ա-ը նույնպես ողջունում են:            Ա-ը հետևում են ուսուցչի ներածությանը:</p>	Ուսուցչի խոսք	Power Point Կոլաժ՝ թագավորական ընտանիքը Թագուհու մեկնաբանությամբ տեսանյութ
<p>Ա-ը կարող են հարցեր տալ:            Ա-ը միանում են խմբային աշխատանքին:</p>	Վարժություն	Power Point, Աշակերտների անուններով նախապատրաստված սեղաններ
<p>Ա-ը սկսում են աշխատանքային գործընթացը:            Ա-ը տեղափոխվում են այլ սեղանի մոտ և շարունակում են քննարկումը:            Յուրաքանչյուր խմբի վարողը մնում է նույն սեղանի մոտ և յուր. փուլի սկզբում ամփոփում է տվյալ պահի արդյունքները:</p>	ԱԱ / ՉԱ  ԽԱ	Նյութեր յուրաքանչյուր խմբի սեղանի համար, բառարաններ, թուղթ, պլանշետ, սեղանի զանգ, Power Point բաց տարածքի համար:
<p>Ա-ն իրենց գրառումները տեղադրում են գրատախտակի վրա և կրկին զբաղեցնում են իրենց տեղերը:</p>	ԱԱ	
<p>Ա-ը ամփոփում են արդյունքը:</p>	Վարժություն	
<p>Ա-ը գրանցվում են և ստեղծում թվիթերյան գրառում            Տարբերակ՝ Ա-ը կարող են արձագանքել նաև այլ գրառումների</p>	ԱԱ	Ինտերնետային կապ, հեռախոսների օգտագործում
<p>Ա-ը լսում են</p>	Ուսուցչի խոսք	PP, Թագուհու մեկնաբանությամբ տեսանյութը




# ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱԼԵՐՈՒ ՉԱՐԳԱՑԱԾ ԱՆՈՂԵԼԵՐ

## ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ


Կոմպետենցիաների մոդել  
**Պատմություն** առարկայի համար



Կոմպետենցիաների մոդել  
**Անգլերեն** առարկայի համար



Կոմպետենցիաների մոդել  
**Էթիկա** առարկայի համար



Կոմպետենցիաների մոդել  
**աստղագիտություն | կենսաբանություն |**  
**քիմիա | ֆիզիկա** առարկայի համար



**Ձեռք բերել և կիրառել  
մասնագիտական  
գիտելիքներ**

օգտվել բնագիտական  
գիտելիներից և դրանք  
ինքնուրույն ընդլայնել



**Ձեռք բերել իմացություն  
բնագիտական մեթոդների  
կիրառմամբ**



**Բնագիտական գործնական  
կոմպետենցիա**



**Հաղորդակցվել**

փոխանակել  
առարկայական և  
մասնագիտական  
տեղեկություններ



**Անդրադարձնել և դատել**

ճանաչել բնագիտական  
իրողությունները տվյալ  
համատեքստում և  
դատողություններ անել  
դրանց մասին



# ԿՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԼՔԸ ԿՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԼՔԸ

- Մտածել | համագործակցել | ներկայացնել
- Ձայների շրջան
- Ավտոբուսի կանգառ
- Ձևագնդի խմբեր | բուրգեր
- Խմբային փազլ
- Ձկնորս | ակվարիում
- Ուսուցողական թիմեր
- Լուռ արտացոլում
- Փուլեր
- Յուրաքանչյուր ճանապարհի 3 բույս
- Մտագրոհ
- Առանցքակալ | կրկնակի շրջան





## ՄՏԱԾԵԼ | ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ | ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

Այս մեթոդն ունի երեք ֆայլ: Նախ՝ աշակերտներն անհատապես մտածում են որոշակի հարցի մասին, այնուհետև նրանք զույգ են կազմում՝ քննարկելու և համեմատելու իրենց գաղափարները: Վերջապես, նրանց հնարավորություն է ընձեռնվում իրենց գաղափարները կիսելու դասարանի հետ՝ որպես մեծ խումբ:

Նպատակն է խթանել գաղափարների ձևավորումը, բարձրացնել աշակերտների վստահությունն իրենց իսկ գաղափարների նկատմամբ, զարգացնել մեծ խմբի մոտ հանրային խոսքի/ելույթի հմտություններ:



## ԶԱՅՆԵՐԻ ՇՐՋԱԼ

Այս մեթոդի նպատակն է խթանել հանրային խոսքի և միմյանց լսելու ունակությունն աշակերտների շրջանում: Աշակերտները կազմում են չորս կամ հինգ հոգուց բաղկացած շրջաններ: Աշակերտներին հանձնարարեք ինչ-որ թեմա և մի քանի թույլ տվեք ի մի բերեն իրենց մտքերը: Այնուհետև ազդարարեք քննարկման սկիզբը. յուրաքանչյուր աշակերտ պետք է ունենա մինչև երեք թույլ խոսելու հնարավորություն: Այս ընթացքում ոչ ոք իրավունք չունի որևէ բան ասել և խանգարել: Երբ բոլորը մեկ անգամ խոսեն ծավալեք ենթախմբային քննարկում: Նշեք, որ աշակերտներն իրենց քննարկումը պետք է ծավալեն այլոց կողմից սահմանված գաղափարների վերաբերյալ: Այս մեթոդի նպատակն է ձևավորել նոր գաղափարներ, զարգացնել լսողության հմտություններ և ստեղծել բոլոր աշակերտների համար հավասար մասնակցության հնարավորություն և համագործակցային միջավայր:



## ԱՎՏՈՒՄԻՍԻ ԿԱՆԳԱՌ (ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԴՈՒԵՏ)

Այս մեթոդի նպատակն է զարգացնել առաջադրանքի արդյունավետ մշակման և արդյունքների համալիր համեմատության հմտությունն աշակերտների մոտ:

Ուղղորդեք աշակերտներին, որ նյութն առանձին մշակելուց հետո



մոտենան դասասենյակում գտնվող կանգառներին, որտեղ սպասում են այլ աշակերտներ: Այնուհետև խրախուսված աշակերտներին միասին քննարկել և համեմատել իրենց լուծումները: Այս մեթոդը հատկապես կիրառելի է տարասեռ դասարանների համար, որոնցում կան տարբեր արագությամբ աշխատող աշակերտներ:



## ՁԱԿՆԴԻ ԽՄԲԵՐ | ԲՈՒՐԳԵՐ

Այս մեթոդի շնորհիվ հնարավորություն է տրվում մեծ թվով աշակերտների ակտիվորեն, համակարգված և արդյունավետ մասնակցել խմբային աշխատանքների և ներկայացնել իրենց կարծիքը: Աշակերտները նախ աշխատում են միայնակ, ապա զույգերով, ապա չորսով և այլն: Շատ դեպքերում, չորսով աշխատելուց հետո, աշակերտները նախաձեռնում են լիազումար քննարկում, որի ընթացքում իրենց եզրակացությունները կամ լուծումները համատեղվում և ամփոփվում են: Խմբի մեծացմանը զուգընթաց առաջ քաշեք ավելի ու ավելի բարդ առաջադրանքներ և հարցադրումներ, որպեսզի աշակերտները չձանձրանան կրկնվող հարցադրումներից և առաջադրանքներից: Օրինակ՝ աշակերտներին առաջարկեք առաջ քաշել մի քանի հարցեր, որոնք վերաբերում են դասի թեմային: Նախ՝ զույգերով աշակետները փորձում են պատասխանել առաջ քաշված հարցերին, այնուհետև զույգերը միանում են՝ կազմելով չորսյակներ և շարունակում են իրենց քննարկումները՝ հարստացնելով կամ լրացնելով առկա պատասխանները և գաղափարները: Վերջում իրականացվում է արդյունքների ամփոփում և ներկայացում: Երաբանչյուր խմբից մեկ ներկայացուցիչ ներկայացնում է այդ խմբի քննարկման արդյունքները և եզրակացությունները: Այս մեթոդի նպատակն է առաջ քաշել նոր գաղափարներ, նեղացնել թեման, զարգացնել որոշումներ կայացնելու հմտություններն աշակերտների շրջանում:



## ԽՄԲԱՅԻՆ ՓԱՉԼ (ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ)

Այս մեթոդը նախատեսում է, որ աշակերտները մասնագիտական խորը գիտելիքներ ձեռք բերեն թեմային առնչվող որևիցե բաղադրիչի վերաբերյալ, այնուհետև կիսեն իրենց փորձը դասընկերների հետ՝ հավասարը հավասարի ուսուցման միջոցով: Թեման

բաժանէք մի քանի բաղադրիչների և ձևավորէք 3-5 ենթախմբեր, յուրաքանչյուր ենթախմբին տրամադրէք թեմայի տարբեր բաղադրիչները (կտորներ): Յուրաքանչյուր ենթախմբի խնդիրն է զարգացնել փորձագիտական գիտելիք իր առանձնահատուկ բաղադրիչի վերաբերյալ՝ ուղեղային գրոհի, գաղափարների մշակման և, եթե ժամանակը թույլ է տալիս, հետազոտական աշխատանքի միջոցով: Երբ աշակերտները ձեռք բերեն իրենց բաղադրիչի առնչությամբ մասնագիտական գիտելիքներ, փոխէք խմբերը, որպեսզի նոր խմբի յուրաքանչյուր անդամ ձեռք բերի այլ ոլորտներին առնչվող փորձագիտական գիտելիքներ: Այնուհետև աշակերտները հերթով փոխանցում են իրենց փորձը/գիտելիքը խմբի մյուս անդամներին՝ դրանով իսկ վերջնական տեսքի բերելով հիմնական թեմայի վերաբերյալ գիտելիքների ներկայակարգ:

## | ԶԿՆՈՐՍ | ԱԿՎԱՐԻՈՒՄ

Այս մեթոդն աշակերտների մոտ զարգացնում է համապարփակ դիտարկման և վերջինիս արդյունքների վերլուծության և հետադարձ կապի ապահովման հմտություններ և կարողություններ: Բաժանէք դասարանը երկու խմբի: Առաջին խումբն իրականացնում է երկրորդ խմբի կողմից կատարվող աշխատանքների ակտիվ դիտարկում: Առաջին խումբը կազմում է շրջանակ և քննարկում է որևէ հարց/թեմա կամ կատարում է դերախաղ ներկայացման տեսքով: Երկրորդ խումբն առաջին խմբի շուրջ շրջան է կազմում, և արդյունքում ստացվում է երկու շրջան՝ արտաքին և ներքին: Կախված ներքին (առաջին) խմբին Ձեր կողմից տրված առաջադրանքից, արտաքին (երկրորդ) խումբը կարող է հավելյալ հարցադրումներ անել ներքին խմբին կամ առաջադրանքներ տալ և իրականացնել ակտիվ դիտարկում՝ ինչպես ներքին խմբի մասնակիցների վարքի, այնպես էլ տրվող պատասխանների հետ կապված: Կարևոր է, որ վերջում իրականացնէք երկու խմբերի հետ քննարկում, վերլուծություն և կարծիքների փոխանակում՝ ներկայացնելով ակտիվ դիտարկման արդյունքները: Այս մեթոդի նպատակն է զարգացնել խմբային համագործակցությունը, փոխազդեցությունը, գաղափարների փոխանակման, վերլուծության և հետադարձ կապի տրամադրման հմտություններն աշակերտների շրջանում:





## ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԹԻՄԵՐ

Այս մեթոդի շրջանակում աշակերտներին ուսումնական տարվա սկզբից բաժանում են խմբերի: Երբ ցանկանում են կազմակերպել փոքր խմբային քննարկում կամ թիմային աշխատանք ձեր դասի շրջանակում, աշակերտներին ընդգրկեք արդեն իսկ բաժանված խմբերում: Չորսական անդամ ունեցող խմբերն առավել արդյունավետ են աշխատում, քանի որ յուրաքանչյուր քառյակը կարող է բաժանվել զույգերի՝ կախված գործունեությունից: Այս մեթոդի նպատակն է աշակերտների միջև կայուն համագործակցության և փոխհարաբերությունների խթանում և կրթական գործընթացում մասնակցայնության մակարդակի բարձրացում:



## ԼՈՒՌ ԱՐՏԱՑՈՒՄ

Այս մեթոդի շրջանակում աշակերտներին տալիս ենք մի քանի րոպե՝ մտածելու որևէ խնդրի կամ խոչընդոտի մասին: Խնդրեք նրանց գրի առնել իրենց մտքերը և գաղափարները կաշուն թերթիկների վրա: Առաջադրեք կոնկրետ խնդիր կամ մարտահրավեր, օրինակ, խնդրեք նրանց գրել խնդրին առնչվող երեք ամենակարևոր դրական և բացասական կողմերը: Ավելի օգտակար կլինի, եթե նրանք իրենց գրի առած մտքերը փակցնեն գրատախտակի կամ պատի վրա: Այնուհետև խնդրեք նրանց, որ քննարկման փուլ անցնելուց առաջ իրենց գաղափարները կիսեն իրենց համադասարանցիների հետ: Այս մեթոդի միջոցով դուք ակտիվացնում ենք ավելի պասիվ աշակերտներին և ապահովում ենք, որ յուրաքանչյուր ոք հետադարձ կապ տրամադրելու հնարավորություն ունենա:



## ՓՈՒԼԵՐ

Այս մեթոդն ավելի արդյունավետ է փոքր խմբերով աշխատելու համար: Շրջում են խմբերով և խրախուսում, որ խմբի յուրաքանչյուր անդամ կիսվի իր կարծիքով առաջ քաշված հարցի վերաբերյալ: Դասավանդողները հաճախ այս մեթոդն օգտագործում են որպես մասնակիցների ծանոթացում կամ որպես դասի լիցքաթափման մաս: Փորձեք խմբային աշխատանքը ծանծրայի չդարձնել՝ պարբերաբար ինչ-որ առաջադրանքներ և ուղղորդումներ տալով աշա-

կերտներին: Փորձեք հնարավորինս կարճ առաջադրանքներ տալ: Օրինակ՝ խուսափեք այնպիսի հարցերից, ինչպիսիք են՝ «Ես ուզում եմ, որ բոլորը նշեն իրենց անունը, ապա մատնանշեն դասընթացի մեկ բաղադրիչ, որի մասին նրանք ոչինչ չգիտեն, բայց ցանկանում են սովորել»: Մեծ խմբերի դեպքում աշակերտները կարող են ձանձրանալ, այնպես որ կարճ հարցերի և պատասխանների դեպքում աշակերտներն ավելի կաշխուժանան, ինչն էլ մեզ անհրաժեշտ է:



## ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՃԱՆԱՊԱՐՅ 3 ՐՈՊԵ

Խնդրեք զույգերով երեք թույլ խոսել ինչ-որ հարցի մասին: Եղեք խիստ ժամանակի պահպանման առումով: Հնարավոր է, որ աշակերտները դժվարանան երեք թույլի մեջ տեղավորվել, բայց դա հիանալի միջոց է աշակերտների համար իրենց գաղափարները հստակ և համակարգված շարադրելու առումով, ինչն իր հերթին նշանակում է, որ ավելի պասիվ աշակերտները հնարավորություն կունենան խոսելու և լսված լինելու: Առանց ընդհատելու ունկնդրելու արվեստը այն հմտությունն է, որ գրեթե բոլոր աշակերտների մոտ պետք է խթանել և զարգացնել: Այս մեթոդը կարելի է օգտագործել այլ խմբային աշխատանքներում:



## ՄՏԱԳՐՈՅ

Այս մեթոդը կարող է արժեքավոր լինել ստեղծագործ և ազատ մտածողությունը խթանելու համար, հատկապես օգտակար է ինդրի լուծում փնտրելու կամ բազմազան գաղափարներ առաջ բերելու ժամանակ: Սկսեք «Ինչպե՞ս կարող ենք ...» կամ «Ի՞նչ գիտենք ...» հարցերով և խրախուսեք խմբին արագորեն առաջ քաշել գաղափարներ: Դրանք ինքներդ գրանցեք գրատախտակին:

Հստակեցրեք, որ սա հետազոտական գործընթաց է, նախապես սահմանեք որոշ կանոններ, օրինակ՝ ցանկալի է մեծ քանակությամբ գաղափարների սահմանում, ուստի՝ բոլորին պետք է քաջալերվի իրենց ներդրումն ունենալ ցանկացած մակարդակում այն պահին, երբ իրենց հարմարավետ զգան:

Արագ և կարճ պատասխաններն այս փուլում ավելի արժեքավոր են, քան երկար, բարդ կազմված նախադասությունները:



Գաղափարները պետք է նշել առանց կողմնակի մեկնաբանության և պիտակավորման՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական ձևակերպումներով: Ոչ ոք չպետք է ասի. «դա չի ստացվի, քանի որ ...» կամ «դա լավագույն գաղափարն է, որը մենք լսել ենք մինչ այդ»: Դա կարող է ստիպել աշակերտների մի մասին ամաչել և գերծ մնալ հետագա մտքերի արտահայտման գործընթացից:



## ԱՌԱՆՑՔԱԿԱԼ (ԿՐԿՆԱԿԻ ՇՐՋԱՆ)

Այս մեթոդի նպատակն է գաղափարների, նյութերի, կարծիքների, տնային առաջադրանքների, առանձին աշխատանքի արդյունքների համեմատությունը և ներկայացումը:

Աշակերտներին ուղղորդե՛ք ձևավորելու կրկնակի շրջան, որտեղ յուրաքանչյուր աշակերտ նստած կամ կանգնած է մյուս աշակերտի դիմաց: Յուրաքանչյուր աշակերտ ունենում է մի գործընկեր: Նրանց միջև մտքերի փոխանակումից հետո շրջանակը պտտվում է և գործընկերները փոխվում են: Երկու շրջանների միաժամանակյա պտույտը հակառակ ուղղությամբ ավելի արդյունավետ է, քանի որ գործընկերներն ավելի լավ են խառնվում: Յնարավոր է նաև ներկայացնել 2 տարբեր տեքստեր և իր համար անձանոթ տեքստ լսած աշակերտին խնդրել, որ վերջինս այն ներկայացնի տեքստն իմացողին: Այս կերպ աշակերտները հատուկ ուշադրությամբ են լսում, հարցեր ուղղում և անձանոթ տեքստն այնքան լավ են հասկանում, որ հնարավոր է դառնում թե՛ ներկայացումը, թե՛ ընկալումը:



ԿՈՍՄԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ  
ՁԵՎԱՎՈՐՍԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ  
ՂԱՍԻ ՓՆԱՅԱՏՈՒՄ



| Ուսուցիչ՝ \_\_\_\_\_ | Դասարան՝ \_\_\_\_\_ | Դասաժամի թեմա \_\_\_\_\_  
 | Դասախոսող՝ \_\_\_\_\_ | Ամսաթիվ՝ \_\_\_\_\_ | Առարկա՝ \_\_\_\_\_

- 1 | Որո՞նք են տվյալ դասաժամի միջոցով փոխանցվող հիմնական կոմպետենցիաները: Աշակերտներն ի՞նչ պետք է կարողանան անել դասաժամի ավարտին
- 2 | Աշակերտներն ակտիվացնող համագործակցային ինչպիսի՞ գործողություններ, մեթոդներ կամ սոցիալական ձևեր են կիրառվել
- 3 | Ո՞ր հարցերին պետք է անդրադառնալ աշակերտի հետ համատեղ ամփոփիչ զրույցի ընթացքում

### Զափանիչ Առանձին բնութագրիչներ

- |   |   |
|---|---|
| <b>4</b>   Դասաժամի նպատակային կողմնորոշումը և կառուցվածքը                | <b>4.1</b> Նյութը և առաջադրանքները հասկանալի կերպով բացատրվում են աշակերտներին<br><b>4.2</b> Սովորելու գործընթացն ունի հստակ կառուցվածք, սովորելու գործընթացի քայլերը ողջամիտ կերպով փոխկապակցված են<br><b>4.3</b> Ուսուցիչն ապահովում է դասաժամի կարգավորված ընթացքը (դասարանի կառավարում)<br><b>4.4</b> Դասն ունի ամփոփում, որը կապակցված է նպատակի հետ |
| <b>5</b>   Դասաժամի դիդակտիկ - մեթոդական ներդաշնակությունը և տարբերակումը | <b>5.1</b> Դասաժամի բովանդակությունը և պահանջների մակարդակը համարժեք են<br><b>5.2</b> Ուսուցման մեթոդները հարմարեցված են աշակերտներին, ինչպես նաև դասաժամի նպատակներին ու բովանդակությանը<br><b>5.3</b> Օգտագործվող ուսումնական նյութերն ու մեդիան հարմարեցված են աշակերտներին և դասաժամի բովանդակությանը   |
| <b>6</b>   Ակտիվ դասապրոցեսի աջակցություն                                 | <b>6.1</b> Աշակերտներն ակտիվ մասնակցում են դասին<br><b>6.2</b> Ուսուցիչը խթանում է ինքնուրույն սովորելը:<br><b>6.3</b> Ուսուցիչը խթանում է համագործակցային սովորելը   |
| <b>7</b>   Մանկավարժական մթնոլորտը  | <b>7.1</b> Ուսուցիչը խթանում է աշակերտների ինքնավստահությունը, նա խրախուսում և քաջալերում է նրանց   |



# ՓՈՐՁԱԿԱՆ ԱՌՁԱՂՄԱՆՔՆԵՐ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ծրագրի փորձարարական փուլում ուսուցիչների ու տնօրենների համար նախատեսված առաջադրանքներ, որոնք կարող են կիրառվել դպրոցներում:



## ՓՈՐՁՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախաձեռնեք և կազմակերպեք մանկավարժական խորհրդի նիստ, որի նպատակն է քննարկել հետևյալ հարցերը՝

**ա** | Ինչպե՞ս կազմակերպել կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված ուսուցումը Հայաստանի հանրակրթական դպրոցներում:

**բ** | Ի՞նչ փոփոխություններ են անհրաժեշտ դպրոցի ուսումնական գործընթացում, որպեսզի հնարավոր լինի խթանել կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցումը և բարձրացնել ուսուցիչների արդյունավետությունը:

Ձևակերպեք քննարկման արդյունքները առաջարկների, որոշումների կամ այլ փոխզիջումային ձևակերպումների տեսքով:



## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

### ՓՈՐՁՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԶԱՄԱՐ

ՀԱՐՑԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆ
<p>Ձեր անցկացրած մանկավարժական խորհրդի նիստերի մասին, որոնց ընթացքում քննարկվել են կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման համար նպաստավոր միջավայրի ձևավորման հարցերը:</p> <p><b>1</b>   Ինչպե՞ս արձագանքեցին մանկավարժական խորհրդի անդամները:</p>	
<p><b>2</b>   Ի՞նչ ֆորմալ խոչընդոտներ կան ուսուցիչների կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցումն ու համագործակցությունը խթանելու համար:</p>	
<p><b>3</b>   Ի՞նչ վարքագծային կամ այլ խոչընդոտներ կան ուսուցիչների կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցումն ու համագործակցությունը խթանելու համար:</p>	
<p><b>4</b>   Լշե՞ք փորձնական կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասերի անցկացման մասին Ձեր դպրոցում արտահայտված ամենահետաքրքիր և նորարարական առաջարկները:</p>	
<p><b>5</b>   Լշե՞ք կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասի համար նախատեսված դասալսման և գնահատման մասին Ձեր դիտարկումներն ու առաջարկները:</p>	
<p><b>6</b>   Լշե՞ք Ձեր մյուս դիտարկումներն ու առաջարկները կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման վերաբերյալ:</p>	



## ՓՈՐՁՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմե՛ք Ձեր Նախընտրած մեկ դասաժամի ընթացքը Նկարագրող պլան և վարե՛ք այդ դասաժամը՝ հաշվի առնելով կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասի տարբեր տարրեր և **հետևյալ բաղադրիչները.**

- | պահանջների մակարդակներ,
- | առաջադրական բայերի (օպերատորների) օգտագործում և առաջադրանքների ձևակերպման ժամանակ,
- | աշակերտներին ակտիվացնող, համագործակցային Նվազագույնը մեկ ուսուցման մեթոդի կիրառում,
- | կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասավարտում (կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված ուսուցման տարրեր):



## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

### ՓՈՐՁՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՐՅԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆ
<p>Ձեր անցկացրած փորձնական դասի մասին, որի ընթացքում փորձել եք կիրառել կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման տարրեր տարրեր:</p> <p><b>1</b>   Ի՞նչն էր դժվար Ձեզ համար:</p>	
<p><b>2</b>   Ի՞նչը դրական ներգործություն ունեցավ Ձեր դասի վրա:</p>	
<p><b>3</b>   Ինչո՞վ էր տարբերվում այդ դասը Ձեր վարած նախորդ դասերից:</p>	
<p><b>4</b>   Ի՞նչպես արձագանքեցին աշակերտները:</p>	
<p><b>5</b>   Նշե՞ք Ձեր կարծիքը հետևյալ կետերի վերաբերյալ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• պահանջների մակարդակներ</li> <li>• առաջադրական բայերի օգտագործում առաջադրանքների ձևակերպման ժամանակ</li> <li>• համագործակցային մեթոդների կիրառում</li> </ul>	
<p><b>6</b>   Նշե՞ք Ձեր մյուս դիտարկումներն ու առաջարկները կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման վերաբերյալ:</p>	



## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՓՈՐՁԻՑ

Ծրագրի մասնակից 18 ուսուցիչներն Վա-  
նաձորում և Երևանում իրենց անձանոթ  
դասարաններում վարել են 36 փորձնական  
դասեր՝ օգտագործելով կոմպետենցիա-  
ների ձևավորմանն ուղղված ուսուցման  
տարրեր: Մեթոդներն ու նյութերը 2019թ.  
սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ներ-  
կայացվել են մասնակից 20 դպրոցների  
մանկավարժական խորհուրդներում և մե-  
թոդական միավորումներում:

ՂԻՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱՎԱԿՄԱՆ

ՍԳՈՒՄԸ





- Ի՞նչն է նոր՝ ի տարբերություն ավանդական դասի
- Կոմպետենցիաներ ձևավորող դասը՝ ուսուցչի ծանրաբեռնվածության կրճատման հնարավորություն
- Ուսուցիչը՝ աջակցող և ուղեկցող, լարվածության նվազեցում
- Ինքնուրույն և խմբային աշխատանքի խթանում
- Չափավոր աղմուկ, ներդասարանային տարբերակում
- Մեթոդի ձևական կիրառման փոխարեն՝ բովանդակություն և արժեքներ

1

## ԻՆՉՆ Է ՆՈՐ՝ Ի ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԴԱՍԻ

Դասի նպատակը ոչ միայն գիտելիք մատուցելն ու դրա վերարտադրումն է, այլև հմտությունների ձևավորումը առաջադրական բայերի կիրառմամբ, ինչպես նաև դրանց օգնությամբ ձեռք բերված գիտելիքը վերաիմաստավորելն ու խորացնելը:

2

## ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ ԶԵՎԱՎՈՐՈՂ ԴԱՍԸ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՅՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Գրեթե բոլոր դպրոցներում ԿՁՈՒ տարրերի ներկայացումը սկզբնապես կասկածանքով և մտավախությամբ է ընդունվել, այնուհետև՝ ուսուցիչները հայտնաբերել են նման տարրեր իրենց դասավանդման փորձի մեջ, դրանցում տեսել ուսուցչի աշխատանքի արդյունավետության բարձրացման և ծանրաբեռնվածության կրճատման հնարավորություն:

3

## ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ԱԶԱԿՑՈՂ ԵՎ ՈՒՂԵԿՑՈՂ. ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՈՒՄ

Դասապրոցեսն առավելապես իրականացնում է աշակերտը: Ուսուցիչը մնում է ուղղորդող, ձևակերպած հարցերի շուրջ քննարկումն իրականացնող: Քիչ էին ծանրաբեռնված դասերը: Շեշտը դրված էր ոչ թե նյութի ծավալի, այլ նյութի յուրացման վրա: Շատ աշակերտների դուր է եկել իրենց ակտիվ դերն ու իրենք են ուսուցիչներից պահանջել, որ նման դասերը հաճախակի դառնան: Յետաքրքիր է, որ կոմպետենցիաների ստուգման չափանիշները հասանելի են նաև աշակերտներին և ծնողներին:

## 4

## ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԵՎ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽԹԱՆՈՒՄ

Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասն ավելի դիսկամիկ է և օգնում է կարճ ժամանակահատվածում մեծ դասարանն ընդգրկել դասապրոցեսում: Այն մի կողմից խթանում է անհատական ազատությունը, պատասխանատվությունն ու ինքնուրույն աշխատանքը, մյուս կողմից՝ խմբային համագործակցային աշխատանքը: Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասի «մեխը» քննադատական մտածողության ձևավորումն է, ինչն օգնում է աշակերտին խնդիրը դիտել տարբեր տեսանկյուններից, հարց տալ սովորել, լսել իր կարծիքից տարբեր կարծիք ունեցողներին:

## 5

## ՉԱՓՎՈՐ ԱՂՄՈՒԿ ՆԵՐԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ

Կոմպետենցիաների վրա հիմնված դասը արդյունավետությամբ տարբերվում է սովորական դասից՝ բազմաբնույթ իրահանգներով և ժամանակի հստակ կառավարմամբ: Այսպիսի աղմուկը դասին նպատակային է: Ներդասարանային տարբերակման խմբային մեթոդները թույլ են տալիս դասին հավասարապես ներգրավել տարբեր ընդունակություններով աշակերտների: Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասը ավելի մոտիվացիոն է, թույլ է տալիս մեկ դասի շրջանակում միաժամանակ ձևավորել մի քանի կոմպետենցիա՝ թիրախում պահելով վերջնարդյունքը:

## 6

## ՄԵԹՈԴԻ ՁԵՎԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՓՈԽԱՐԵՆ՝ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐ

Մեր դիտարկած փորձնական դասերից մեկի ժամանակ ուսուցիչը լայնորեն կիրառեց բազմազան մեթոդներ, խթանեց աշակերտների խմբային ու ստեղծագործական աշխատանքը: Այդուհանդերձ, դասի կյուբի վերլուծության փուլում աշակերտները կառչած մնացին կարծրատիպերից: Ընտրված կյուբի նեղ շրջանակը և առաջադրված հարցադրման ընդհանրական բնույթը սխալ եզրահանգումների առիթ տվեցին: ԿՁՈՒ տարրերի և ձևաչափի կիրառմանը զուգահեռ կարևոր է, որ դասի բովանդակային և արժեքային բաղադրիչները չհակասեն բուն կոմպետենցիաների նկարագրիչներին:



# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

- 1** Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասերի համար նպատակահարմար է 90 րոպեանոց կրկնակի դասերի անցկացումը: Դպրոցները պետք է ունենան ներդպրոցական պլանավորման ավելի մեծ ազատություններ, ճկուն գործիքներ, որոնք խթանում են ԿՁՈՒ կիրառումը:
- 2** Ուսուցիչները նշում էին, որ անհրաժեշտ է տարբեր առարկաներ (բնագիտական, հումանիտար և այլն) դասավանդող ուսուցիչների ջանքերով համաձայնեցնել և միասնականացնել կոմպետենցիաների գնահատման համար անհրաժեշտ առաջադրականների/օպերատորների (action verbs) և նկարագրիչների (descriptors) սահմանումն ու ընկալումը: Համապատասխանաբար պետք է փոխվեն նաև թեմատիկ պլաններ կազմելու սկզբունքները:
- 3** Որոշիչ է տնօրենների դերը՝ մանկավարժական խորհուրդների միջոցով ուսուցիչների համագործակցության, թեմատիկ աշխատանքային խմբերի ձևավորման և նախագծային աշխատանքի խրախուսման համար:
- 4** Անհրաժեշտ է դասագրքերում ընդգրկել կոմպետենցիաները՝ որպես ծրագրի և դասագրքի անբաժանելի մաս: Օգտակար էր նաև ԿՁՈՒ դասի դասալսման և գնահատման թերթիկի կիրառումը: Այն գետեղված է սույն ձեռնարկում:





# ԻՆՉՊԵՍԻՏԻՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ

## ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ

կարգավիճակի բաղադրիչներ

- 1 | Մասնակցային մշակույթ
- 2 | Կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում և գնահատում



- Չափանիշներ
- Ընթացակարգ
- Կարճաժամկետ և միջնաժամկետ արդյունքներ

## ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- 1 | Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված փորձնական դասերի կազմակերպում, կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման նպատակով ուսուցիչների համագործակցային աշխատանք մանկավարժական խորհրդում, մեթոդական միավորումներում և դպրոցի մասնակցային մյուս խորհուրդներում
- 2 | Քննությունների առաջադրանքների սահմանում՝ ըստ առանցքային և առարկայական կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման բաղադրիչների, այդ կոմպետենցիաների ստուգում
- 3 | Ուսուցիչների համար նպատակային վերապատրաստումների կազմակերպում
- 4 | Ուսուցիչների ընտրության հատուկ չափանիշներ և աշխատանքային պայմանների համապատասխանեցում կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման սկզբունքներին
- 5 | Դպրոցի կառավարման և որոշումների ընդունման մասնակցային և նորարարական ձևերի կիրառում

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

- 1 | Մանկավարժական խորհրդի որոշում «Մասնակցային դպրոց» դառնալու պատրաստակամության և այդ ուղղությամբ աշխատանք ծավալելու (դպրոցն առաջադրված չափանիշներին համապատասխանեցնելու) մասին
- 2 | «Մասնակցային դպրոց» (փորձաշրջան) ժամանակավոր կարգավիճակի տրամադրում
- 3 | Փորձաշրջանի սահմանում, որից հետո ՀՀ ԿԳՄՍՆ և ծրագրային գործընկերները կարող են ստուգել չափանիշներին համապատասխանությունը՝ մենթորական, տեսչական և այլ գործունեության միջոցով
- 4 | Դպրոցի կողմից «Մասնակցային դպրոց» կարգավիճակի տրամադրման չափանիշների բավարարում, լրացուցիչ չափանիշների ինքնուրույն սահմանում և կիրառում
- 5 | ՀՀ ԿԳՄՍՆ կողմից «Մասնակցային դպրոց» պաշտոնական վերջնական կարգավիճակի և վկայագրի տրամադրում



## ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- 1 Դպրոցի կողմից սախաձեռնողականություն ցուցաբերելու, կոմպետենցիաների վրա հիմնված, մասնակցային մոտեցումների կիրառման և ՀՀ ԿԳՄՍՆ կողմից լրացուցիչ խրախուսման արդյունքում լրացուցիչ խթանների ստեղծում մյուս դպրոցների համար
- 2 ՀՀ ԿԳՄՍՆ կողմից չափորոշիչների փոփոխության գործընթացում դպրոցների գործնական ներգրավում, կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման տեղային փորձարկումներ
- 3 Մասնակցային կառավարման և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման փորձնական կիրառման արդյունքում քննական առաջադրանքների և գնահատման ձևերի մեջ կոմպետենցիաների վրա հիմնված մոտեցումների ներդրում ԿԳՄՍՆ կողմից



Քննադատական և ստեղծագործական մտածողություն, մասնակցային մշակույթ և քաղաքացիական համերաշխություն. ՀՀ հանրակրթական համակարգի համար հասարակագիտական բովանդակության և ժողովրդավարական կոմպետենցիաների մշակման հայեցակարգային փաստաթուղթ, Աշոտ Ոսկանյան, Հրաչ Բայադյան, Վահրամ Սողոմոնյան, 2020:

| [www.escs.am](http://www.escs.am)

| [www.bildung-lsa.de](http://www.bildung-lsa.de)

| [https://ec.europa.eu/education/education-in-the-eu/council-recommendation-on-key-competences-for-lifelong-learning\\_en](https://ec.europa.eu/education/education-in-the-eu/council-recommendation-on-key-competences-for-lifelong-learning_en)

| Weinert, Franz (Hrsg.): Leistungsmessung in Schulen. Weinheim und Basel: Beltz, 2001.

| Delors, Jacques. Learning: The Treasure Within / UNESCO, 1996.

| Mulder, Martin. The concept of competence: blessing or curse? I. Torniaainen, S. Mahlamäku-Kultanan, P. Nokelainen & P. Ilsley (Eds). Innovations for Competence Management. Lahti: Lahti University of Applied Sciences, pp. 11-24.

| Council of Europe: Reference Framework of Competences for Democratic Culture, April 2018.

| Key competences for lifelong learning: European Reference Framework, Luxembourg: Publications Office of the European Union, March 2019.

| Lehrplan Gymnasium/ Fachgymnasium. Kompetenzentwicklung und Unterrichtsqualität. Grundsatzband. Sachsen–Anhalt, Kultusministerium, 2015.

| Terzian, Shelley Marie: Curriculum Reform in Post-Soviet Armenia: Balancing Local and Global Contexts in Armenian Secondary Schools (Paper 107), 2010.

# ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ



**ՀՀ կրթության, գիտության,  
մշակույթի և սպորտի նախ**  
[www.escs.am](http://www.escs.am)



**Գերմանիայի Սաքսոնիա Անհալթ  
երկրամասի կրթության  
նախարարություն**

2006թ.-ից ի վեր Գերմանիայի Սաքսոնիա Անհալթ երկրամասը սերտ համագործակցում է Հայաստանի հետ կրթության և մշակույթի ոլորտներում:

[www.mb.sachsen-anhalt.de](http://www.mb.sachsen-anhalt.de)



**Կրթական քաղաքացիական  
նախաձեռնություն**

Կրթական քաղաքացիական նախաձեռնությունը ինքնակազմակերպվող հարթակ է, որը հիմնադրվել է 2017-ի ապրիլին՝ հանուն որակյալ, իրավունքահենք, մասնակցային կրթության և կրթական համակարգի արդարության:

FB: @krtakan2017



**Դասավանդիր, Հայաստան**

«Դասավանդիր, Հայաստան»-ը Teach for All միջազգային կրթական կազմակերպության անդամ հիմնադրամ է, որի առաքելությունն է կրթական անհավասարության վերացումը և Հայաստանի բոլոր մարզերում երեխաների կրթական հնարավորությունների ընդլայնումը:

[www.teachforarmenia.org](http://www.teachforarmenia.org)



**Նախագիծն իրականացվել է ԳԴՀ արտգործնախարարության Արևելյան գործընկերության դրամաշնորհային ծրագրի օժանդակությամբ**

